

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
«ԳԵՈԷԿՈՆՈՄԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ԳԵՈԷԿՈՆՈՄԻԿԱ» ՓԲԸ

Տնօրեն

Գլխավոր տնօրեն

_____ Ա. Գևորգյան

_____ Ա. Բաղդասարյան

« _____ » _____ 2025թ.

« _____ » _____ 2025թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻ ԱՎԱԶԻ

ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ՀԱՏԻԿ» ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2025-2026 ԹԹ. ԿԱՏԱՐՎԵԼԻՔ
ԵՐԿՐԱԲԱՆԱՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի պահպանության
ճարտարագետ

Ն. Սահակյան

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ.....	4
2.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	8
2.1.	Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկատվություն.....	8
2.2.	Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.....	8
2.3.	Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	9
2.3.1.	Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ բնութագիրը.....	9
2.3.2.	Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասի երկրաբանական կառուցվածքը.....	14
2.3.3.	Երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդիկական և ծավալները..	15
2.3.4.	Աշխատանքների ակնկալվող արդյունքները.....	20
2.3.5.	Արտադրատեխնիկական մաս.....	20
2.4.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը և նախագծման նորմատիվաիրավական հենքը	21
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ.....	26
3.1.	Գտնվելու վայրը.....	26
3.2.	Ռելիեֆը, երկրաձևաբանությունը.....	29
3.3.	Կլիման.....	30
3.4.	Սողանքներ, սեյսմակայունություն.....	32
3.5.	Մթնոլորտային օդը.....	34
3.6.	Ջրային ռեսուրսները.....	35
3.7.	Հողերը.....	41
3.8.	Բուսական և կենդանական աշխարհը.....	44
3.9.	Վտանգված էկոհամակարգերը.....	48
3.10.	Բնության հատուկ պահպանվող տարածքները.....	51
4	ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	53
4.1.	Ենթակառուցվածքներ.....	53
4.2.	Հողերի տնտեսական յուրացման բնութագիրը.....	55
4.3.	Պատմության և մշակութային հուշարձանները.....	57
4.4.	Տեղեկատվություն հանրության ծանուցուման, հանրային լսումների և արդյունքների մասին.....	57
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ.....	58
5.1.	Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա.....	58
5.2.	Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա.....	59
5.3.	Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա.....	59
5.4.	Ազդեցությունը կենսաբազմազանության վրա.....	59
5.5.	Ընդերքօգտագործման թափոններ.....	60
5.6.	Աղմուկ և թրթռում.....	60
5.7.	Սանիտարապաշտպանիչ գոտի.....	61
5.8.	Պատմամշակութային հուշարձանների պահպանություն.....	61
5.9.	Սոցիալ-տնտեսական ազդեցություն.....	61

6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ.....	63
6.1.	Բնապահպանական միջոցառումների բնութագրերը.....	63
6.2.	Արտակարգ իրավիճակների կառավարում.....	66
6.3.	Բնապահպանական մշտադիտարկումների պլան.....	69
	ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	72

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.	ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	71
Հավելված 2.	ԲՆԱՊԱՀԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....	74
Հավելված 3.	ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ.....	78
Հավելված 4.	ՀՈՂԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ.....	79

1. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Սույն հաշվետվությունում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **երկրաբանական ուսումնասիրություններ**՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները,

2) **ընդերք**՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար,

3) **ընդերքի տեղամաս**՝ որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ,

4) **ընդերքօգտագործում**՝ երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում,

5) **ընդերքօգտագործման իրավունք**՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ,

6) **օգտակար հանածո**՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո,

7) **օգտակար հանածոյի երևակում**՝ ընդերքի տեղամաս, որում հայտնաբերվել է օգտակար հանածոյի առկայություն, որի քանակը, որակը և արդյունաբերական նշանակությունը դեռ որոշված չեն,

8) **գետաողողատային տիպի հանքավայր**՝ գետերի ողողատային տարածք, որը պարունակում է գետի վարարումների հետևանքով կուտակված ավազի (ավազակոպճային, ավազակոպճազլաքարային խառնուրդի) վերականգնվող պաշարներ, որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական,

9) **օգտակար հանածոյի պաշարներ**՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են,

10) **օգտակար հանածոյի արդյունահանում**՝ օգտակար հանածոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր,

11) **օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն**՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ,

12) **հանքավայր**՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական,

13) **հող**՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ,

14) **հողի բերրի շերտ**՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով,

15) **խախտված հողեր**՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր,

16) **ռեկուլտիվացում**՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական,

17) **արտադրական լցակույտեր**՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում,

18) **նախատեսվող գործունեություն**՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում,

19) **շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում**՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում,

20) **բնապահպանական կառավարման պլան**՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում,

21) **բնության հատուկ պահպանվող տարածք**՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ,

22) **բնության հուշարձան**՝ բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ,

23) **պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ**՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական,

գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից,

24) **բույսերի Կարմիր գիրք**՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին,

25) **կենդանիների Կարմիր գիրք**՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին.

26) **ազդակիր համայնք**՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկատվություն

Նախատեսվող գործունեություն	ՀՀ Արարատի մարզի Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասում 2025-2026 թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքներ
Ձեռնարկող	«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Արարատի մարզ, Մասիս համայնք, Միս գյուղ թիվ 4 հողամաս
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ. Էլ. փոստ, հեռախոս	Կոնտակտային անձ՝ Արմեն Մկրտչյան Armen-m86@mail.ru 091-15-55-22
Նախատեսվող գործունեության տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արարատ մարզ, Մասիս համայնք, գ. Միս
Նախատեսվող աշխատանքները	Երկրաբանահետախուզական աշխատանքներ

2.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրում, Ռանչպար գյուղից մոտ 0.8 կմ դեպի հյուսիս, Միս գյուղից 1 կմ հարավ-արևմուտք:

«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ-ի ֆինանսական միջոցներով նախատեսվում է կատարել երկրաբանահետախուզական աշխատանքներ, որի նպատակն է.

1. Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասում (այսուհետ՝ Տեղամաս) իրականացնել երկրաբանահետախուզական աշխատանքներ՝ ուսումնասիրելով օգտակար հանածոն՝ ըստ «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍ ԳՕՍ-ի և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ԳՕՍ-ի և տեխնիկական պահանջների:

2. Իրականացնել Տեղամասի հաշվեկշռային պաշարների հաշվարկում և երկրաբանատնտեսագիտական գնահատում:

3. Ուսումնասիրել Տեղամասի շահագործման հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանները:

Հայցվող տարածքի մակերեսը մոտ 42.6 է: Տեղամասը տեղակայված է 826-828 մ բացարձակ բարձրությունների վրա: Մակերևույթի ռելեֆը համեմատաբար հարթ և


հարթավայրային է: Հայցվող տեղամասում հողերը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության են: Տեղամասը հետախուզված չէ և որևէ ընդերքօգտագործման նշանակություն չի ունեցել: Հետևաբար, նախկինում խախտված, վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ առկա չէ:


2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը

2.3.1. Շրջանի երկրաբանական կառուցվածքի համառոտ բնութագիրը

Միջինարաքսյան միջլեռնային իջվածքի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Կ.Ն. Պաֆենհոլցը, Ա.Տ. Ասլանյանը, Հ.Հ. Գաբրիելյանը, Ա.Տ. Վեհունին, Վ.Ա. Ավետիսյանը, Վ.Ա. Ամարյանը, Է.Խ. Խարազյանը և ուրիշներ :

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ուշ պրոտերոզոյան հասակից մինչև միոցեն-չորրորդականի և ժամանակակից լճային և լճագետային նստվածքները, հրաբխային, այլուվիալ-պրոյուվիալ ու ճահճային առաջացումները: Շրջանի երկրաբանական կառուցվածքի հիմնական տարրերն արտացոլված են Է.Խ. Խարազյանի և Ռ. Խառատյանի 1981թ.-ին կատարած 1:50000 մասշտաբի երկրաբանական հանույթի արդյունքում կազմված երկրաբանական քարտեզում (նկ. 2.1):





Նկ. 2.1. Շրջանի երկրաբանական քարտեզ

Շերտագրական կտրվածքի ապարները ներկայացված են (ներքևից վերև) հետևյալ կերպ.

Ուշ պրոտերոզոյան-վաղ պալեոզոյան մետամորֆային կոմպլեքսի ապարները հիմնականում ներկայացված են երկփայլարային, նոնաքարային և քվարց-նոնաքար-ստավրոլիտային մետամորֆային թերթաքարերով: Մետամորֆային ապարները աններդաշնակորեն ծածկվում են ստորին-վերին կավձի և պալեոգենի հասակի առաջացումներով:

Կավձի համակարգի ապարները ներկայացված են երկու կոմպլեքսով՝ հրաբխածին և ներժայթքային, որոնք տեղադրված են միոցենի և պալեոգենի հասակի ապարների տակ: Հրաբխածին ապարները ներկայացված են հիմնականում սպիլիտ-դիաբազներով (հզորությունը՝ 407 մ) և ավելի ներքև տեղադրված ներժայթքային գաբրոճնորիտային կոմպլեքսով (հզորությունը՝ 5000 մ):

ՊԱԼԵՈԳԵՆ: *Ստորին Լոցենի բաժին (Կոստուցի շերտախումբ)*. այս հասակի առաջացումները ներկայացված են ավազաքարերով, ալևրոլիտներով, կրաքարերով, արգիլիտներով, մերգելիտներով և կոնգլոմերատներով (միայն կտրվածքում):

Միջին Լոցենի բաժին (Ազատի շերտախումբ). այս հասակի առաջացումներն ունեն մեծ տարածում և բավականին մեծ հզորություն (1000-1200 մ) Ազատ գետի ավազանում: Շերտախումբի կազմում գերակշռում են տարաչափ հատիկայնությամբ ավազաքարեր և տուֆաավազաքարեր նումուլիտային ֆաունայով: Հաճախ դրանցում հանդիպում են կրաքարերի, կավերի, տուֆերի, դիաբազային պորֆիրիտների հոծ շերտեր (0):

Օլիգոցենի բաժին (Շորադբյուրի շերտախումբ). այս հասակի առաջացումները մերկանում են Արարատյան գոգավորության հյուսիս-արևելյան մասում, մասնավորապես Շորադբյուր, Ազատ, Վեդի, Շաղափ գետերի ավազաններում: Հիմնականում դրանք ներկայացված են կավաավազաքարերով, վարդագույն կրաքարերով, ալևրոլիտներով և արգելիտներով (հզորությունը 1000 մ):

Միոցենի հասակի նստվածքային առաջացումներ, որոնք մերկանում են շրջանի արևելյան մասում՝ ոչ մեծ տարածքում (բերված երկրաբանական քարտեզի սահմաններից դուրս): Միոցենի նստվածքները հիմնատակվում են օլիգոցենի, միջին-վերին Լոցենի, կավճի տերիգեն-նստվածքային և պրոտերոզոյ-ստորին պալեոզոյան հասակի մետամորֆային կոմպլեքսի ապարներով, որոնք քարտեզագրական հորատանցքերով հատվել են տարբեր խորությունների վրա:

Միոցենի հասակի ապարները ներկայացված ստորին, միջին և վերին բաժինների նստվածքային առաջացումներով, որոնք հիմնականում բացահայտվել են քարտեզագրական հորատանցքերով:

Ստորին միոցեն (Հացավանի շերտախումբ). այս շերտախումբի նստվածքներն ներկայացված են հերթափոխվող խայտաբղետ (առավելապես՝ կարմրավուն) միկրոկոնգլոմերատներով, ավազաքարերով, ալևրոլիտներով և կավերով (հաճախ գիպսաբեր: Ըստ ծագման դրանք ցամաքածին, լճային, գետաբերուկ-հեղեղաբերուկային նստվածքներ են: Շերտախումբը հայտնի է նաև խայտաբղետ անվամբ: Հորատանցքերով բացահայտված է այդ նստվածքների համընդհանուր տարածումը Միջնարաքսյան իջվածքում և Երևանի գրաբեն-սինկլինորիումում: Շերտախումբի ընդհանուր հզորությունը 600-700 մ է:

Միջին միոցեն (Ջրվեժի գիպսաաղաբեր շերտախումբ). այս հասակի նստվածքները տարածականորեն հարում են ստորին միոցենի նստվածքների տարածման մարզերին և կտրվածքով դեպի վեր աստիճանաբար փոխարինում են վերջիններիս: Հորատանցքերով բացահայտված է շերտախմբի լայն տարածումը Հրազդան և Քասախ գետերի ավազաններում, Արարատյան իջվածքում և Հոկտեմբերյանի սարավանդում: Ներկայացված է տերիզեն և հոմոզեն առաջացումներով՝ գիպսաաղաբեր նստվածքներով (մոտ 1400 մ հզորությամբ):

Գիպսաաղաբեր շերտախումբը բարդեցված է աղային տեկտոնիկայով, որով և պայմանավորված է հզորությունների մեծ տատանումները:

Վերին միոցեն (Հրազդանի շերտախումբ). այս հասակի նստվածքները զգալի աններդաշնակությամբ տեղադրված են գիպսաաղաբեր շերտախմբի վրա և ներկայացված են հիմնականում կրային կավերով, կավային թերթաքարերով, ավազաքարերով, ավազային կավերով և գլաքարերով (մոտ 400 մ հզորությամբ):

Միոցենի նստվածքային առաջացումների վրա տրանսգրեսիվորեն տեղադրված են պլիոցենի հրաբխածին գոյացումները, որոնք Արարատյան գոգավորության սահմաններում համատարած ծածկոց չեն առաջացնում:

Վերին պլիոցեն (Արագածի շերտախումբ). Վերին Պլիոցենի առաջացումները հիմնականում ներկայացված են բազալտային, անդեզիտաբազալտային, անդեզիտային, անդեզիտաբազալտային լավաների ծածկոցներով և զբաղեցնում են բավականին մեծ տարածություն Արագած լեռան արևմտյան և հարավային նախալեռնային մասերում: Լավային ծածկոցների ընդհանուր հզորությունը տատանվում է 30-40 մ-ից մինչև 150-200 մ և ավելի:

Ըստ Վ. Ամարյանի և Է. Խարազյանի Արարատյան իջվածքի ոչ դիսլոցացված ծածկոցը կազմված է վերին պլիոցենի դոլերիտային բազալտներից, չորրորդական հասակի անդեզիտաբազալտային ծածկոցների առանձին հոսքերից, որոնք միմյանցից տարանջատվում են կավերի, ավազակավերի, կոպիճների և մանրազլաքարերի ու դրանց խառնուրդների հաճախ հերթափոխվող շերտերով: Նկարագրվող կտրվածքը եզրափակում է ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ և ալյուվիալ նստվածքներով:

Չորրորդական ժամանակաշրջանում Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով ձևավորված լճային ավազանում կուտակվել են կոպձի, ավազի և կավի հզոր նստվածքներ, որոնք ուսումնասիրվել են բազմաթիվ հորատանցքերում: Որոշ

տեղերում դրանք տեղադրված են պլիոցենի հրաբխային առաջացումների՝ դուերիտային բազալտների վրա: Չորրորդական առաջացումների կտրվածքում առանձնացվում են Արարատյան գոգավորության լճային-այլուվիալ նստվածքների երեք դարավանդների հորիզոններ: Ըստ առաջացման հասակի դրանք վերագրվում են միջին-վերին (III դարավանդի հորիզոն՝ հզորությունը մինչև 100 մ) և վերին չորրորդական (II և I դարավանդների հորիզոններ, հզորությունները համապատասխանաբար մոտ 50 մ և 20 մ): Այս նստվածքները հիմնականում ներկայացված են լճային-այլուվիալ կավերով (ավազային, դիատոմիտային և այլն). կավավազներով, ավազակավերով, գլաքարերով, կոպճագլաքարերով և ավազներով:

Մեծ տարածում ունեն նաև ժամանակակից այլուվիալ, պրոլյուվիալ և դելյուվիալ առաջացումները: Հրազդան գետի հովտի այլուվիալ նստվածքի հզորությունը հասնում է մինչև 70 մ, ինչը վկայում է դրա ինտենսիվ ակումուլյատիվ-երոզիոն գործունեության մասին: Արաքս, Հրազդան և Սև ջուր գետերի հունների դիրքը հոլոցենում հաճախ փոփոխվել է: Տարածաշրջանի ռելիեֆի բացասական ձևերը հիմնականում ներկայացված են այդ գետերի հին չորացած հունները: Ժամանակակից հունների նկատմամբ դրանց տեղաշարժման ամպլիտուդան տատանվել է 2 կմ-ից մինչև 10 կմ-ի սահմաններում, որը վկայում է գետերի ինտենսիվ մեանդրագենեզի և այլուվիալ-պրոլյուվիալ փուխր առաջացումների լայն զարգացման մասին: Վերջիններիս հետ ծագումնաբանորեն կապված է Միսի ավազի հանքավայրը:

Երկրաբանակառուցվածքային տեսակետից տարածաշրջանը հարում է Վերին ալպյան միջլեոնային իջվածքների և հրաբխատեկտոնական զանգվածների գոնայի միջինարաքսյան միջլեոնային իջվածքին: Վերջինս տիպիկ միջլեոնային իջվածք է, որն ունի հյուսիս-արևմտյան տարածում և ընդգրկում է Արաքս գետի միջին հոսանքի ավազանը՝ Արարատյան գոգավորությունը: Իջվածքը հյուսիսում սահմանափակված է Արագածի հրաբխային զանգվածով, արևելքում Ուրծի և Վայքի լեռնաշղթաներով, իսկ հարավում՝ մեծ ու փոքր Արարատի հրաբխային զանգվածներով և Հայկական պար լեռնաշղթայով: Իջվածքի հյուսիս-արևելյան սահմանը ներկայացված է Երևանի խորքային բեկվածքով: Միջինարաքսյան իջվածքի սահմաններում առավել խոշոր կառույցներից են Մասիսի, Արտաշատի, Սադարակի իջույթները և Փարաքար-Նորաբացի, Բամբակաշատ-Կարմրաշենի, Արարատի բարձրացումները:

Պայմանավորված երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով շրջանը հարուստ է ոչ մետաղական օգտակար հանածոներով՝ քաղալտ, հրաբխային տուֆ, ավազակոպճային խառնուրդ և այլն:

2.3.2. Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասի երկրաբանական կառուցվածքը

Բուն տեղամասը ծագումնաբանորեն կապված է Արարատյան հարթավայրի ստորին (առաջին) լճային, լճագետային մակառոդոդահունային դարավանդների հետ և ներկայացված է ավազներով, խճաքարերով, ավազակավերով, կավավազներով և դասվում է գետառոդոդատային տիպին: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին չորրորդական-ժամանակակից պրոլյուվիալ-այրուվիալ և ժամանակակից այրուվիալ-դելյուվիալ նստվածքային առաջացումները:

Տեղամասի հարակից տարածքի ամբողջ մակերեսը զբաղեցնում են վերին չորրորդական հասակի Մեծամոր գետի վերհունային դարավանդի նստվածքները, ներկայացված ավազակավերով, կավավազներով ու ավազներով: Վերջիններս գետի ողողահունում ծածկվում են ժամանակակից այրուվիալ նստվածքով:

Այս նստվածքների կուտակումը պայմանավորված է տարածքի երկրաձևագիտական առանձնահատկություններով: Հետախուզվող տեղամասը գտնվում է Սևջուր գետի ձախակողմյան մասում և ներկայացված է ժամանակակից հունային առաջացումներով, սակայն գետի ափերի քարացանցերով (գամյոններով) համատարած ամրացած լինելու, ինչպես նաև գետից որոշակի հեռավորության շնորհիվ տեղամասի ավազակոպճային կուտակը համարյա չի փոխում իր տարածական դիրքը և ձևը:

Նախնական դիտարկումներով, ինչպես նաև նույն ծագումնաբանությունն ունեցող այլ հանքավայրերում և տեղամասերում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով, օգտակար հաստվածքը բնութագրվում է համեմատաբար համասեռ ներքին կառուցվածքով: Ավազի հաստվածքում կոպճի, ավազի և կավային նյութի առանձին շերտեր կամ ոսպնյականման կուտակումներ չեն հանդիպում: Առանձին միջակայքերում դիտվում են կոպճի կամ ավազի գերակայունություն, սակայն դրանք ունեն փոքր տարածում և կոպիճի նյութն ըստ հղկվածության աստիճանի ներկայացված է սուբանգուլյար (թույլ հղկված) ու լավ հղկված, կլորավուն և իզոմետրիկ ձևերի բեկորներով, որոնց չափերը չեն գերազանցում 50 մմ-ը:

Կավային նյութը գտնվում է հիմնական զանգվածներում ցրված (փոշիացած) վիճակում:

Դեյուվիալ առաջացումները տեղամասի շրջանում ունեն մեծ տարածում, ներկայացված են հողաբուսական շերտով և կավավազային նյութով թույլ ցեմենտացված ավազախճային, մանրաբեկոր առաջացումներով:

Օրագրով ներկայացված հետախուզման տարածքում սողանքային երևույթներ և փլուզումներ հայտնաբերված չեն: Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11 օգոստոսի 2021թ. Թիվ 06-Ն հրամանի՝ օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգի հանձնարարականների վերագրվում է 1-ին խմբին: Ավազի և ավազակոպճային հանքավայրերի հետախուզման ժամանակ կիրառվող հետախուզական փորվածքների ցանցի խտությունը ներկայացվող պահանջներն են. A կարգ՝ 100-200 մ, B կարգ՝ 200-300 մ C₁ կարգ՝ 300-400 մ:

2.3.3. Երկրաբանահետախուզական աշխատանքների մեթոդիկան և ծավալները

Տեղամասի հետախուզման մեթոդիկայի և միջոցների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով վերջինիս օգտակար հաստվածքի երկրաբանական կառուցվածքի և տեղանքի երկրաձևաբանական պայմանների առանձնահատկությունները:

Հետախուզական ցանցի խտությունն ընտրվել է ըստ «Ավազի և ավազի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» հանձնարարականների:

Հետախուզական հորատանցքների տարածական դիրքերը որոշվել են հաշվի առնելով օգտակար հաստվածքի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, տեղանքի երկրաձևաբանական և լեռնատեխնիկական պայմանները, ինչպես նաև արդյունաբերական կարգերով օգտակար հաստվածքի հետախուզման անհրաժեշտությունը: Ելնելով նմանատիպ հանքավայրերի հետախուզման փորձից՝ նախատեսվել է երկրաբանական ուսումնասիրությունն իրականացնել օգտակար հաստվածքի լրիվ հզորությունը բացող հորատանցքերի անցկացման միջոցով:

Տեղամասի օգտակար հաստվածքի վերաբերյալ առավել հավաստի տվյալներ ստանալու նպատակով ընտրվել է պաշարների B կարգին համապատասխան հետախուզական ցանց: Հետախուզական փորվածքների միջև հեռավորությունը ընդունվել է հիմ-

նականում 200-300 մ սահմաններում: Հետախուզական աշխատանքներն իրականացվելու են մինչև 50 մ խորությամբ 15 հորատանցքի անցկացման միջոցով, որի ընդանուր ծավալը կկազմի 750 մ:

Հորատանցքերի հորատումից ստացված հանուկի նմուշարկումը կատարվելու է հանուկի ամբողջ երկարությամբ, նմուշների սեկցիայի երկարությունը՝ 5 մ:

Ընդամենը վերցվելու է 153 հանուկային նմուշ: Նմուշների լաբորատոր ուսումնասիրությունները կատարվելու են լրիվ ծրագրով՝ գնահատելով ինչպես օգտակար հաստվածքի ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունները, այնպես էլ դրա բաղադրամասերի՝ ավազի և կոպիճի (վերջինիս առկայության դեպքում) որակական հատկանիշները բնութագրող ցուցանիշները:

Օգտակար հանածոյի քիմիական և միներալոգիական կազմերը կուսումնասիրվեն 2-ական նմուշով: 2 նմուշով կիրականացվեն նաև լաբորատոր ստուգողական անալիզներ:

Բնամասում ավազի բնական խտության, ծավալալիքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար մեխանիկական եղանակով կիրականացվեն 2 հետախուզահորի անցման աշխատանքներ: Տեղամասի տարածքում կկատարվեն նաև ռադիոմետրիական չափումներ՝ СРП 68-01 ռադիոմետրի միջոց:

Տեղամասի տարածքում կատարվել է 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ, մոտ 42.6 հա ընդհանուր մակերեսով տարածքում, որի տեղագրական հիմքի վրա գործիքային եղանակով կտեղադրվեն բոլոր հետախուզական փորվածքները և ապարների երկրաբանական սահմանները:

Մինչև նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմելը, անհրաժեշտ է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, ինչպես նաև գործող հրահանգներին և ԳՕՍՏ-երին:

Նախագծի կազմում Կատարողների աշխատանքի ծախսը կազմում է.

- ինժեներ-երկրաբան՝ մեկ մարդ 1 ամիս,
- երկրաբան-համկարգչային ձևավորող՝ մեկ մարդ 1 ամիս,
- ընդամենը՝ երկու մարդ մեկ ամիս:

Համաձայն «Инструкция по составлению проектов и смет на геологоразведочные работы» հրահանգի պահանջների, աշխատանքների կազմակերպման ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 1%-ը:

Դաշտային աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են լուծարման աշխատանքներ, որոնց ծախսերը կազմում են դաշտային աշխատանքների արժեքի 0.8%-ը:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է մոտ 42.6 հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահանութային աշխատանքներ: Երևակման 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի մոտ 18 կմ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որը կիրականացվի հորատանցքերի և հետախուզահորերի անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ պայմանագրային հիմունքներով:

Հետախուզահորերի անցման աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով: Նախատեսվում է անցնել մինչև 4 մետր խորության 2 հետախուզահոր՝ 8 զճամետր ընդհանուր ծավալով: Հետախուզահորերի չափերն են՝ 4.0 մ x 2.0 մ x 1.5 մ:

Հետախուզահորերի ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին.

– ժամանակակից դելյուվիալ առաջացումներ՝ հողաբուսական շերտ կավավազների պարունակությամբ՝ IV կարգ,

– ավազակոպիճ՝ VI կարգ:

Ծավալը ըստ հետախուզահորերի և ապարների ամրության բաշխվում է հետևյալ կերպ.

Հետախուզահորերի համարները	Նախագծային խորությունը, մ	Այդ թվում ըստ ապարների կարգի	
		IV	VI
Հետախուզահոր 1	4.0	1.5	2.5
Հետախուզահոր 2	4.0	1.5	2.5
Ընդամենը	8.0	3.0	5.0

Հորատանցքերի նախատեսվող ծավալները բերվում են ստորև.

Հորատանցքերի համարները	Նախագծային խորությունը	Ապարների կարգը	
		IV	VII
Հորատանցք 1	50.0	1.8	48.2
Հորատանցք 2	50.0	2.0	48.0
Հորատանցք 3	50.0	1.7	48.3
Հորատանցք 4	50.0	1.6	48.4
Հորատանցք 5	50.0	1.5	48.5
Հորատանցք 6	50.0	2.0	48.0
Հորատանցք 7	50.0	1.4	48.6
Հորատանցք 8	50.0	1.3	48.7
Հորատանցք 9	50.0	1.8	48.2
Հորատանցք 10	50.0	1.7	48.3
Հորատանցք 11	50.0	1.8	48.2
Հորատանցք 12	50.0	1.4	48.6
Հորատանցք 13	50.0	1.5	48.5
Հորատանցք 14	50.0	1.9	48.1
Հորատանցք 15	50.0	2.1	47.9
Ընդամենը	750.0	25.5	724.5

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է հետևյալ քանակներով.

- հորատանցքերի փաստագրում՝ 750.0 մ,
- հետախուզահորերի փաստագրում- 8.0 գծ. մ:

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ դաշտային պայմաններում երկու կետում որոշել բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը:

Ավազակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հորատանցքերից: Նմուշների քանակը՝ 153:

Հետախուզահորերի անցման ժամանակ բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փխրեցման գործակիցը որոշելու համար նախատեսվում է վերցնել 2 նմուշ:

Հորատանցքերից վերցված 153 նմուշներից 145 նմուշ կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների, ինչպես նաև 2 նմուշ քիմիական անալիզների,

2 նմուշ հսկողական անալիզների և 2 նմուշ միներալապետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար: Հետախուզահորերից կվերցվի 2 նմուշ՝ դաշտային պայմաններում ծավալային զանգվածի ու փխրեցման գործակցի որոշման համար: Նշված լաբորատոր փորձարկումները կիրականացվեն մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով, որը կիրականացվի СРП-68-01 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով:

Սույն ծրագրի կազմման նախապատրաստական փուլում արդեն իսկ ընկերության կողմից լիցենզավորված մասնագետի միջոցով կատարվել է տեղամասի տարածքի 1:2000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ՝ մոտ 42.6 հա մակերեսով տարածքում: Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշգրտում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Այս ծրագրով մոտեցող ճանապարհների և հորատահարթակների շինարարական աշխատանքներ չի նախատեսվում, քանի որ երևակման տարածքում հարթ ռելիեֆը և դաշտամիջյան ճանապարհները բարվոք վիճակում են դաշտային աշխատանքները կազմակերպելու համար:

Միսի ավազի հանքավայրի «ՀՄՏԿ» տեղամասում նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լաբորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո (դրական արդյունքների դեպքում), նախատեսվում են աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում.

- կամփոփվեն և կհամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Կազմված հաշվետվությունը կներկայացվի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ընդերքաբանական փորձաքննության համար:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների և ուղևորների փոխադրումը կկատարվի հիմնականում ասֆալտապատ և մոտ 1 կմ գրունտային ճանապարհներով:

Տրանսպորտային ծախսերն ընդունվում են դաշտային աշխատանքների նախահաշվային արժեքի 10%-ի չափով:

2.3.4. Աշխատանքների ակնկալվող արդյունքները

Սույն Ծրագրի իրացման արդյունքում սպասվում են ՍԻսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասի վերաբերյալ այնպիսի տեղեկատվության ստացում, որը հնարավոր կդարձնի ՀՀ օրենսդրության պահանջների համապատասխան մշակել երկրաբանական հաշվետվություն՝ տեղամասի օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների հաշվարկմամբ և երկրաբանատնտեսագիտական գնահատմամբ: Հաշվետվությունում ներառվելիք տեղեկատվության լիարժեքությամբ կապահովվի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի մշակման համար անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:

2.3.5. Արտադրատեխնիկական մաս

Տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հորատվելու են հորատանցքեր՝ ЗИЛ 131 ИА УРБ-2А-2 մակնիշի հորատող սարքի միջոցով, անց են կացվելու հետախուզահորեր՝ CAT 336 GC-07 մակնիշի էքսկավատորով: Այս սարքավորումները օգտագործվելու են պայմանագրային-վարձակալական հիմունքներով: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում օգտագործվելու է նաև SHACMAN X3000 մակնիշի ինքնաթափ, որը նույնպես աշխատելու է պայմանագրային-վարձակալական հիմունքներով:

Ջրցանի հաշվարկ: Ջրի ծախսը 1 մ² մակերեսով տարածքում փոշենստեցման համար ընդունվում է 0.3 լ/մ² (ըստ ջրցան մեքենայի տեխնիկական բնութագրի այն կազմում է 0.2 լ/մ²): Փոշենստեցում կատարվել ու է միայն ավտոճանապարհներում՝ 4000×6=2400 մ² (որտեղ 400-ը ճանապարհի երկարությունն է, մ, 6-ը ճանապարհի լայնությունը, մ): Փոշենստեցման ենթակա ամբողջ մակերեսը կկազմի.

Հաշվի առնելով ջրի տեսակարար ծախսի մեծությունը (0.3 լ/մ²), կստանանք՝
 $2400 \times 0.3 = 720$ լ:

Նշված աշխատանքների իրականացման համար ջուրը կմատակարարվի ջի համար նախատեսված տարրաներով, որը կտեղափոխվի SHACMAN X3000 մակնիշի ինքնաթափով:

2.4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրությունը և նախագծման նորմատիվաիրավական հենքը

ՀՀ Արարատի մարզի Միսի ավազի հանքավայրի «ՀՄՏԿ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է առաջնորդվելով բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

➤ ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

➤ ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

➤ ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

➤ ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

➤ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

➤ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

➤ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ., լրամշակված՝ 2022թ.), որով կարգավորվում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

➤ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

➤ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդուն. 21.06.2014թ.-ի ՀՕ-110, խմբագ. 03.05.23թ.-ի ՀՕ-150-Ն), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լուսմների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջա-

վայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

➤ «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 07.01.2005թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

➤ ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

➤ ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

➤ ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

➤ ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

➤ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

➤ ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

➤ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

➤ ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

➤ ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

➤ ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:

➤ ՀՀ առողջապահության նախարարի 17.05.2006թ.-ի N533-Ն հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման հիգիենիկ նորմերը:

➤ ՀՀ կառավարության 30.08.2007թ.-ի N1045-Ն որոշում, որով սահմանվել է պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը:

➤ ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:

➤ ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

➤ ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

➤ ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

➤ ՀՀ կառավարության 25.09.2014 թ.-ի N 1059-Ա որոշում, որով սահմանվում է բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները:

➤ ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 675-Ն որոշում, որով սահմանվում է ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:

➤ ՀՀ կառավարության 17.08.2017թ. N990-Ն որոշում, որով սահմանվում է ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:


➤ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022 թ. N369-Ն հրաման, որով հաստատվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:

➤ ՀՀ կառավարության 11.11.2021թ. N1848-Ն որոշումը, որով հաստատվում է ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

3.1. Գտնվելու վայրը


Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրում, Ռանչպար գյուղից մոտ 0.8 կմ դեպի հյուսիս, Միս գյուղից 1 կմ հարավ-արևմուտք: Մասիս քաղաքի հետ կապված է մոտ 9 կմ, իսկ մայրաքաղաք Երևանի հետ՝ մոտ 24 կմ երկարությամբ ասֆալտապատ ավտոճանապարհներով:



Նկ. 3.1. ՀՀ Արարատի մարզի ակնարկային քարտեզ.

● Միսի ավազակոպճային խտնուրդի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ $40^{\circ}02'44.89''$ - հյուսիսային լայնության, $44^{\circ}21'55.46''$ - արևելյան երկայնության (նկ. 3.2):



Միսի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս

Նկ. 3.2. Միսի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս:

Իրավիճակային հատակագիծ

Հայցվող Միսի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասի ծայրակետային կոորդինատները՝ ըստ ARM WGS-84 կոորդինատային համակարգի, ներկայացված են աղյուսակ 3.1-ում: Հայցվող տարածքի մակերեսը մոտ 42.6 է:

Հ/Հ	X	Y	Հ/Հ	X	Y
1	4434473.000	8445547.000	8	4435232.752	8446425.008
2	4434732.057	8445570.071	9	4435036.478	8446286.831
3	4434991.032	8445593.135	10	4434847.441	8446138.039
4	4435259.000	8445617.000	11	4434672.062	8446005.064
5	4435222.791	8445919.843	12	4434494.883	8445866.068
6	4435187.317	8446216.530	13	4434484.655	8445725.483
7	4435337.535	8446319.930			

Շրջանն ապահովված է էլեկտրաէներգիայով և գազաֆիկացված է: Վառելիքաէներգետիկ հումքի և անտառանյութի պահանջները բավարարվում են ներկրման հաշվին:

Մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ երկաթուղին:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ: Մարզի տնտեսության զարգացման համար իրենց դերն ունեն նաև զբոսաշրջային ռեսուրսները: Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Մարզի բազմաձյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Միսի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասի հարակից հանքավայրերը և տեղամասերը ներկայացված են նկար 3.3 –ում:



Նկ. 3.3. Շրջանի հանքավայրերի իրադրային քարտեզ

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Շրջանի տարածքով հոսում են Մեծամոր, Հրազդան և Արաքս գետերը:

3.2. Ռելիեֆը, երկրաձևաբանությունը

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Միջինարաքսյան միջլեռնային իջվածքի Արարատյան գոգավորության համանուն դաշտավայրի կենտրոնական մասին: Արարատյան դաշտավայրը 800-1000 մ առավելագույն բարձրությամբ գրաբեն-սինկլինալային ճկվածք է՝ լցված գետաճային հզոր նստվածքներով, լավային հոսքերով ու տուֆային կուտակումներով: Մակերևույթի ռելեֆը համեմատաբար հարթ և հարթավայրային է: Տեղամասը տեղակայված է 826-828 մ բացարձակ բարձրությունների վրա:




Նկ. 3.4. Մակերևույթի թեքություններ

- Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս



ա)



Նկ 3.5. Մակերևույթի ձևագրություն՝ ա) սխեմատիկ քարտեզ, բ) պայմանական նշաններ

Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս

3.3. Կլիման

Տեղամասի տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել է «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը» փաստաթղթի տվյալները: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական հարաչափերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, օդի լավորակման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող Արմավիր օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները: Համաձայն օդերևութաբանական կայանի տվյալների ուսումնասիրվող տարածքի կլիմայական շրջանը տաք է՝ շոգ ու չոր ամառով և ցուրտ ու անհողմ ձմեռով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի անցնում 249 մմ-ից, միջին տարեկան միջին խոնավությունը 64% է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +42.6°C, իսկ նվազագույնը՝ -28.6°C: Աղ. 3.2-3.6 ամփոփված է տեղեկատվություն քամիների, օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության, մթնոլորտային տեղումների ու ձյան ծածկույթի վերաբերյալ:

Քամի

Բնակավայրի անվանումը	Սամիսներ	Կրկնելիություն, %								Միջին արագությունը, մ/վ		Միջին ամսական արագությունը, մ/վ	Պերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Պերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		ըստ ուղղությունների								Անտրոբի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ					
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան							
Արտաշատ	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	ՀվԱրլ	2.0	ՀվԱրլ	3.1	
		1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7							
	ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0.6					
		1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6							
	հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0.4					
		1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3							
	հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0.3					
		1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2.0							

Օդի ջերմաստիճանը՝ ըստ ամիսների

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արտաշատ	829	-3.5	-0.5	6.0	12.8	17.5	21.8	25.5	24.9	20.0	13.1	6.0	-0.4	11.9	-28.9	42.6

Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Ամենացուրտ ամսվա, %	Ամենաշոգ ամսվա, %
Արտաշատ	78	73	63	59	59	54	52	52	57	67	75	79	64	78	52

Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը օրական առավելագույն, մմ											Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր				Դեկտեմբեր
Արտաշատ	18	18	26	36	39	23	11	6	10	22	23	17	249	102	147
	18	20	32	36	43	34	27	25	28	36	38	22	43		

Աղյուսակ 3.6

Չյան ծածկույթ

Բնակավայրի անվանումը	Չյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Արտաշատ	40	36	46	41

Նկ. 3.6-ում ներկայացված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը:




Նկար 3.6. Կլիմայական շրջանցման սխեմատիկ քարտեզ

● Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԲ» տեղամաս

3.3. Սողանքներ, սեյսմակայունություն

Ըստ «2007-2010 թթ. ՀՀ տարածքի առավել վտանգավոր սողանքների ամփոփագրի կազմման աշխատանքների» հաշվետվության և ՀՀ Սողանքների քարտեզի, շրջանում սողանքներ և առավել վտանգավոր սողանքային մարմիններ չկան: Քարաթափումների և

սողանքների առաջացման ռիսկերը զրոյական են: Տեղամասի և նրան հարակից տարածքների ուսումնասիրությունները հաստատում են, որ սողանքներ, կարստեր և փլուզումների առկա չեն:



Նկար 3.7. ՀՀ սողանքային շրջանները

● Միսի ավազի հանքավայրի «ՀՄՏԻԿ» տեղամաս

Հայաստանի հանրապետությունը գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ տեկտոնական գոտիները՝ Մերձքուռյան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Զանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված գոտիների սահմաններով է անցնում երկրակեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորներն են Սևան-Աքերայի, Շիրակ-Զանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» փաստաթղթով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար գրունտի հորիզոնական արագացման մեծությունը համապատասխանաբար 300, 400 և 500 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների:



Նկար 3.8. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

● Միսի ավազի հանքավայրի «ՀՄՏԻԿ» տեղամաս

Հանքավայրի տարածքը և մոտակա բնակավայրերը գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում: Հայցվող տարածքին վերագրվում է գրունտի հորիզոնական արագացում $a = 0.3g$ /գրունտային ստվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/:

3.4. Մթնոլորտային օդը

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:



Նկ. 3.9. ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտացանց Սիսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակություններն որոշելու համար 2024 թվականի 1-ին եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են Երևան,

Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Չարենցավան, Կապան և Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 15 անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայան և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետ:

Տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին որոշակի պատկերացում կարելի է ստանալ հաշվարկային եղանակով, որի համար ներկայացվում է ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի մշակած «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկությունները (աղյուսակ 3.7), ըստ որի մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի բնակչության քանակից:

Աղյուսակ 3.7

Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50-100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Հաշվի առնելով, որ տեղամասի տարածքին ամենամոտ գտնվող բնակավայրերի՝ Ռանչպար և Միս գյուղերի մշտական բնակչությունը թվաքանակը համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների 2023թ. հունվարի 1-ի դրությամբ, կազմում է 2644 մարդ, տեղամասի տարածքի մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն կլինեն. փոշի՝ 0.071 մգ/մ³, ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.8 մգ/մ³:

3.5. Ջրային ռեսուրսները

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Ջրագրական հիմնական միավորը Արաքս գետն է, իր Հրազդան խոշոր վտակով: Շրջանի տարածքով է հոսում նաև Մեծամոր գետը:

Արաքս գետը սկիզբ է առնում Թուրքիայի ներկայիս սահմաններում, Հայկական լեռնաշխարհի Բյուրակն բարձրավանդակի ջրբաժան սարավանդի միջլեռնային սառցադաշտային կրկեսների մորենային արգելափակման լճերից ու 2200-2700 մ բարձրությունների վրա լավային կառերից բխող աղբյուրներից: Հոսելով դեպի արևելք Արաքսը իր միջին հոսանքներում երկու անգամ մտնում է ՀՀ սահմանները գետի ընթացքով 364-րդ և 746-րդ կմ հեռավորությունների վրա, դառնալով սահմանային գետ Հայաստանի ու Թուրքիայի (մոտ 150 կմ) և Հայաստանի ու Իրանի (42 կմ) միջև: Արաքսի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 102 հազ. կմ², որից 22.6 հազ.կմ² Հայաստանի Հանրապետության տարածքում: Մինչև հանրապետության սահմանը հասնելը Արաքսը, ունենալով 11630 կմ² ջրհավաք ավազան, արդեն ջրառատ գետ է և ունի ուրույն ջրաբանական բնութագիր: Չնայած ակունքներում աղբյուրալճային սնմանը, նա ունի լեռնային գետերին հատուկ զարնանային բուռն վարարումների ռեժիմ: Արարատյան դաշտի սահմաններում Արաքսը հաճախ ողողում է մերձափնյա հողերը, քանդում ավազաշտպան կառույցներն ու թմբաշարերը: Գետի հիդրոլոգիական բնութագրիչները ըստ Սուրմալու դիտակետի ներկայացված են աղյուսակ 3.6-ում: Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200 գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200 կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000 գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100 կգ/վրկ:

Հրազդան գետը՝ Արաքսի ձախ վտակը, սկիզբ է առնում Սևանա լճից (1900 մ), հոսում է հյուսիս-արևելքից հարավարևելք: Երկարությունը 141 կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ 2560 կմ² (առանց Սևանա լճի): Թափվում է Արաքս գետ Մեծամորի գետաբերանից 5 կմ հոսանքով ներքև: Գետավազանի մակերևույթի ամենաբարձր կետը կազմում է 3467 մ, իսկ ամենացածր կետը՝ 790 մ, Արաքս գետին միախառնվելու հատվածը: Վերին հոսանքում առաջացնում է գալարներ, դարավանդներ Հրազդանը բնական հունով սկիզբ է առել Սևանա լճից, սակայն այժմ գետի սկիզբ է համարվում ստորգետնյա ջրանցքը, որը ջուր է մատակարարում Սևանի հիդրոէլեկտրակայանին (այսուհետ՝ ՀԷԿ) և 5.5 կմ հոսելով 70 մ խորությամբ, դուրս է գալիս երկրի մակերևույթ Գեղամավան գյուղի մոտ, ապա անցնելով ևս 8.5 կմ դերիվացիոն ջրանցքով թափվում է Աղբյուրակի ջրամբար: Ստորին հոսանքում հովիտն աստիճանաբար լայնանում է և դուրս գալիս Արարատյան դաշտ: Հրազդան գետի ընդհանուր անկումը կազմում է ավելի քան 1100 մ: Մինչև Հրազդան

(Աթարբեկյան) ՀԷԿ-ի կառուցումը Սևանա լճից բաց թողնվող ջուրն անցնում էր Հրազդան-Հրազդան դիտակետով: Սակայն ՀԷԿ-ի դերիվացիոն ջրանցքի շահագործումից հետո ջուրը սկսեց շրջանցել Հրազդան հիդրոլոգիական դիտակետը և անցնելով Հրազդան ՀԷԿ-ով թափվում է Աղբյուրակ ջրամբար: Հրազդան գետը հոսելով հանրապետության կենտրոնական շրջաններով և մայրաքաղաքի միջով, համարվում է հանրապետության հիմնական ջրային զարկերակներից մեկը: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արագետը:

Հրազդան գետի ջրային ռեժիմի համար բնորոշ են հետևյալ փուլերը՝ գարնանային վարարում, ամառ-աշնանային և ձմեռային սակավաջրություն: Տարեկան կտրվածքով ամենից շատ հոսքանցնում է վարարումների շրջանում: Հրազդան գետի Հրազդան ջրաչափական դիտակետով վարարումների շրջանում անցնում է տարեկան հոսքի 70%-ը, մնացած ամիսներին բաժին է ընկնում տարեկան հոսքի միայն 30%-ը: Գարնանային վարարումները հիմնականում սկսվում են մարտի կեսերին և շարունակվում են մինչև հունիսի կեսերը, և ունի լավ արտահայտված ալիքի տեսք: Միջին տևողությունը կազմում է մոտ 90 օր, որը կախված է գետի սնման ռեժիմից, օդի ջերմաստիճանից, ձնհալքի շրջանում հեղուկ մթնոլորտային տեղումներից, ձյան մեջ եղած ջրի պաշարից, կայուն ձնածածկույթի հաստատման և վերացման պայմաններից:

Հիդրոլոգիական դիտակետերում Հրազդան գետի հոսքի բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 3.6-ում:

Մեծամոր գետի ակունքն ընդունված է համարել Այդր լճից արևմուտք՝ մոտ 860 մ բացարձակ բարձրության վրա գտնվող ճահճուտները, սակայն գետի սնման գործում մեծ է հատկապես Այդր լճի դերը: Գետը հոսում է Արարատյան դաշտով և թափվում է Արաքս գետ՝ գետաբերանից 625 կմ վերև: Գետի երկարությունը 38 կմ է, ունի ոչ մեծ թեքություն, միջինը՝ 1 մ 1 կմ-ի վրա: Ակունքին մոտ նրա մեջ է թափվում Մաստարա սելավը, որը սկիզբ է առնում Արագածի լեռնազանգվածի արևմտյան լանջերի 3600 մ բարձրությունից և ունի 98 կմ երկարություն: Մեծամորի գետաբերանից 26 կմ վերև թափվում է Քասախ վտակը:

Եթե չհաշվենք վտակների ազդեցությունը, Մեծամոր գետն ունի բացառապես ստորերկրյա սնում գետային հոսքի բարձր բնական կարգավորվածությամբ: Այդ և հիդրոլոգիական այլ բնութագրերով խիստ տարբերվում է հանրապետության մյուս գետերից:

Մեծամորի գետային հոսքը տարվա ընթացքում բաշխվում է գրեթե հավասարաչափ:

Հիդրոլոգիական դիտակետերում Մեծամոր գետի հոսքի բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 3.6-ում:

Աղյուսակ 3.6.

Արաքս, Հրազդան և Մեծամոր գետերի հոսքերի բնութագրիչները հիդրոլոգիական դիտակետերում

Գետ-դիտակետ	Ջրհավաք ավազանի		Միջին տարեկան հոսքը, մ ³ /վ	Տարեկան հոսքի		
	մակերեսը, կմ ²	Միջին բարձրությունը, մ		շերտը մմ	մոդուլը, լ/վ. կմ ²	ծավալը, մլն մ ³
Արաքս-Սուրմալու	22100	920	80.2	114	3.63	2529
Հրազդան-Հրազդան	697	2200	7.74	350	11.1	244
Հրազդան-Արգել	503	2310	4.19	263	8.35	132
Հրազդան-Երևան	2000	1999	5.60	88.0	2.80	177
Հրազդան-Հովտաշեն	2500	1748	25.8	350	11.1	815
Մեծամոր-Տարոնիկ	1560	1410	15,0	304	9,64	474
Մեծամոր - Ռանչպար	3540	1610	33,1	294	9,35	104,4

Մակերևութային ջրերի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը: Տվյալները բերված են համաձայն «ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին 2024 թվականի 3-րդ եռամսյակ» տեղեկագրի:

Դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 6 դիտակետում: Որոշված ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, մագնեզիումի, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները:

Արաքս գետի ջրի որակի դիտարկումները ներկայացված է նկար 3.12, ա-ում:


Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ հատվածում օգոստոսին և սեպտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաղսի գյուղից ներքև հատվածում՝ երեք ամիսների ընթացքում՝ «լավ» (2-րդ դաս), Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում երեք ամիսների ընթացքում՝ «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում՝ երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս), Երևանյան լճի մուտքի մոտ հատվածում՝ երեք

ամիսների ընթացքում՝ «անբավարար» (4-րդ դաս): Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևույթային ջրերի որակի դիտացանցը ներկայացված է նկար 3.12, բ-ում:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և հարավ-արևելք հատվածներում օգոստոս և սեպտեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև՝ օգոստոսին՝ «վատ» (5-րդ դաս), սեպտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի (Մեծամոր գետ) մակերևույթային ջրերի որակի դիտացանցը ներկայացված է նկար 3.12, գ-ում:



ա)



դ) պայմանական նշաններ

3.12. Մակերևութային ջրերի որակի դիտացանց՝ ա) Արաքս գետի ջրավազանային կառավարման տարածք, բ) Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք, գ) Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք, դ) պայմանական նշաններ

Նախատեսվող գործունեության տարածքում ամենամոտ գտնվող ջրային օբյեկտը Մեծամոր գետն է՝ մոտ 23 մ հեռավորության վրա:

Տեղամասի տարածքում գրունտային ջրերի մասին տեղեկությունը առայժմ բացակայում է: Սակայն ենթադրվում է, որ գրունտային ջրեր առկա են, քանի որ այն գտնվում է Մեծամոր գետի ավազանում: Դրանց քանակի և որակի մասին տեղեկություն կստացվի երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտին:

Խմելու և տեխնիկական ջրի պահանջարկը կարող է բավարարվել Միս գյուղի ջրերի հաշվին:

3.6. Հողերը

Հանքաերևակման շրջանում զարգացած են հիմնականում ոռոգելի մարգագետնային գորշ, գետադարավանդային, կիսանապատային գորշ և աղուտ-ալկալի հողատիպերը:


Ոռոգելի մարգագետնային գորշ հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի 800-950 մ բարձրության սահմաններում, ինչպես մարդու դարավոր գործունեության, այնպես էլ գրունտային ու մակերեսային խոնավության համատեղ ներգործության պայմաններում, որոնց ընդհանուր տարածքը կազմում է 53 հազ. հա: Այդ հողերի համար բնորոշ է թույլ հումուսայնությունը (1.5-2.0%) և կարբոնատայնությունը (3-7%), հիմնային ռեակցիան (рН 8.2-8.5), միջին կլանման ծավալը (30-40 մգ.էկվ/100 գ) և բավարար ֆիզիկական հատկությունները: Հողերը հարուստ են ընդհանուր ֆոսֆորով (0,19-0,50%), և կալիումով (1.3-2.07%), սակայն աղքատ են ընդհանուր ազոտով (0.06-0.16):

Գետահովտադարավանդային հողեր: Գոյացել են գետերի հովիտներում, այդ հողերին բնորոշ են հումուսի ցածր (1-2%) պարունակությունը, զգալի է կլանված մագնեզիումի պարունակությունը, рН 6.9-8.1, կլանման ծավալը՝ 14-35մգ/էկվ:

Աղուտ-ալկալի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի խոնավ և գերխոնավ հատվածներում, որտեղ գրունտային ջրերը հանքայնացված են և գտնվում են երկրի մակերեսից 0,5-2.5 մ խորության վրա: Դրանց ընդհանուր մակերեսն Արարատյան հարթավայրում կազմում է 24 հազ. հա: Դրանք բնութագրվում են ուժեղ աղակալվածությամբ (1-3%), կարբոնատների զգալի պարունակությամբ (10-16%), բարձր ալկալիացվա-

ծությամբ (25-80%), որոնց յուրացումը կարող է իրականացվել միայն քիմիական մեկտրացման ճանապարհով: Այս հողերն ընդգրկված են համայնքների այլ հողերի կազմում, որոնք հիմնականում չեն օգտագործվում:

Կիսանապատային գորշ հողերը տարածված են Արարատյան գոգահովտի նախալեռնային գոտու 950-1250 մ բարձրության սահմաններում: Արարատյան հարթավայրում նրանց տարածքը կազմում է 152 հազ. հա: Այդ հողերի համար բնորոշ է հումուսային հորիզոնների փոքր հզորությունը (25-40 սմ), պրոֆիլի թույլ հումուսայնությունը (1.5-2.0 %), բարձր կարբոնատայնությունը (6-30%), հիմնային ռեակցիան (pH 7.8-8.3), միջին կլանման ծավալը (20-30 մգ.էկվ/100 գ) և փոշիացած ստրուկտուրայնությունը: Կիսանապատային գորշ հողերը հարուստ են կալիումով՝ 45-67 մգ/100գ, ֆոսֆորով՝ 3.7-4.2 մգ/100գ և աղքատ են ազոտով՝ 1.4-2.1 մգ/100 գ:



բ) ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

1	Լեռնամարզագետնային ճնատրփային խճային	32	Սևահող տիպիկ արջային կարրոնատային	17	Անտառային դարչնագույն կրաքարոված խճարարային	48	Կիսանախապատային գորշ տիպիկ կուպային
2	Լեռնամարզագետնային ճնային խորքային շիագեցած	33	Սևահող արջային կարրոնատային	18	Անտառային դարչնագույն կրաքարոված տափաստանացված	49	Կիսանախապատային գորշ տիպիկ քլորոնաքային
3	Լեռնամարզագետնային ճնային խորքային շիագեցած	34	Սևահող կարրոնատային մնացորդային կարրոնատային	19	Անտառային դարչնագույն տիպիկ կավայնացած	50	Ռոզգիլի խոնավ մարզագետնային գորշ խորքային ալկալիացած - աղակալած
4	Լեռնամարզագետնային բուլջ ճնային խորքային հագեցած	35	Մարզագետնատափային կոպային	20	Անտառային դարչնագույն տիպիկ խճարարային	51	Ռոզգիլի մարզագետնային գորշ խորք պոլիչիային
5	Լեռնամարզագետնային բուլջ ճնային խորքային շիագեցած	36	Մուգ շագանակագույն խճարարային տեղ-տեղ կարրոնատային ցեմենտացած	21	Անտառային դարչնագույն տիպիկ մնացորդային կարրոնատային	52	Ռոզգիլի մարզագետնային գորշ մեծ մնամոր խորքային ալկալիացած աղակալած
6	Մարզագետնատափաստանային սևահողանման մնացորդային հագեցած	37	Մուգ շագանակագույն մնացորդային կարրոնատային	22	Անտառային դարչնագույն տիպիկ տափաստանացված	53	Ռոզգիլի մնացորդային մարզագետնային գորշ խորք պոլիչիային
7	Մարզագետնատափաստանային սևահողանման խճարարային	38	Շագանակագույն խճարարային տեղ-տեղ կարրոնատային ցեմենտացած	23	Անտառային դարչնագույն կարրոնատային խճարարային	54	Գետնակուտարալանդային մարզագետնանման տիպիկ խոնավացած
8	Մարզագետնատափաստանային տիպիկ մնացորդային հագեցած	39	Շագանակագույն մնացորդային կարրոնատային	24	Անտառային դարչնագույն կարրոնատային տափաստանացված	55	Գետնակուտարալանդային մարզագետնային կուպային
9	Մարզագետնատափաստանային տիպիկ մնացորդային շիագեցած	40	Բաց շագանակագույն խճարարային տեղ-տեղ կարրոնատային ցեմենտացած	25	Անտառային դարչնագույն մնացորդային կարրոնատային	56	Գետնակուտարալանդային մարզագետնացած կուպային
10	Մարզագետնատափաստանային տիպիկ խճարարային	41	Բաց շագանակագույն մնացորդային կարրոնատային	26	Անտառային դարչնագույն մնացորդային կարրոնատային, տափաստանացված	57	Գետնակուտարալանդային մարզագետնացած բերի զարգացած
11	Անտառային գորշ ումեղ շիագեցած խճարարային	42	Բաց շագանակագույն մնացորդային գիպակիր	27	Սևահող կրաքարոված կարրոնատագործ	58	Արուս-ակլայի մարզագետնային տուր-տուլիատարրիային
12	Անտառային գորշ ումեղ շիագեցած կավայնացած	43	Բաց շագանակագույն բերի զարգացած	28	Սևահող կրաքարոված խորքային կարրոնատային	59	Պալեոլիթոթորի կապանցված մնացորդային տիպիկացած աղակալած
13	Անտառային գորշ բուլջ շիագեցած խճարարային	44	Բաց շագանակագույն կուպային	29	Սևահող կրաքարոված կուպային	60	Հողաբուստներ բուլջ զարգացած ալկալիկուպային
14	Անտառային գորշ բուլջ շիագեցած կավայնացած	45	Բաց շագանակագույն պալեոլիթոթորի կապակցված	30	Սևահող կրաքարոված խճարարային	61	Արուսակունց ապարի կերպրի զարգացած խիստ քարքարոտ հորերի համալիրով
15	Ճնակարրոնատային մերդեղացված	46	Կիսանախապատային գորշ խճարարային տիպիկ տեղ-տեղ կարրոնատային ցեմենտացած	31	Սևահող տիպիկ միջնաքար կարրոնատային		
16	Անտառային դարչնագույն կրաքարոված կավայնացած	47	Կիսանախապատային գորշ տիպիկ մնացորդային կարրոնատային				

Նկար 3.13. Հողերի բնական տիպերի բաշխվածության

ա) սխեմատիկ քարտեզ, բ) պայմանական նշաններ



Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսակա- նության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակու- տակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչ- պես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տա- րողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարու- նակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Նախատեսվող գործունեության շրջանակներում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են մոտ 42.6 հա տարածքում: Հայցվող տեղամասում նախ- կինում խախտված, վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ չկա:

Հողամասերի սեփականության և նպատակային նշանակության վերաբերյալ տեղեկատվությունը բերվում է ստորև (աղյուսակ 3.8):

Աղյուսակ 3.8


Տվյալներ հողամասերի սեփականության և նշանակության վերաբերյալ

Հ/Հ	Ծածկագիրը	Սեփականության ձևը	Նպատակային նշանակությունը	Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը
1.	03-083-0118-0001	սեփականություն	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

3.7. Բուսական և կենդանական աշխարհը

Այս տարածքը ներառված է Երևանի ֆլորիստիկ շրջանում, որտեղ տարածված են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները՝ օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով, նաև ավազակավային մայր ապարների վրա բաց և մուգ դարչնային հողերի վրա զարգացած չոր տափաստանային լանդշաֆտային գոտուն բնորոշ բուսականության տեսակներով:

Հայցվող տարածքում տարածված է անապատային բուսականությունը, որտեղ հիմնականում տարածված են հալոֆիլները (*Salsola cricodes* Bieb, *S. Dendroides* Pall, *S. Nitaria* Pall, *Halocnemum strobilaccum* (Pall.) Bieb), գիպսոֆիլները (*Salsona cana* C. Koch, *tomentosa* (Moq.) Spach, *S. Gemmascens* Pall, *Gypsophia aretioides* Boiss, *Halanthium rarifolium* C. Koch, *Cephalorrhynchus takhtadzianii* (Sosn.) Krip.), պսամոֆիլները (*Calligonum polygonoides* L., *Achillea tenuifolia* Lam, *Salsola tamamschjanae* Iljin, *Stipagrostis plumose* (L.) Menro ex T. Andres, *Astragalus paradoxus* Bunge), այն գյուղատնտեսական ակտիվ օգտագործվող տարածք է:



Նկ. 3.14. Բուսական հիմնական տիպերի տարածման քարտեզ՝ ըստ ՀՀ ազգային ատլասի

● Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, շրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև.

– մատուտակ խոզանավոր (*Glycyrrhiza echinate*) – Կատեգորիան՝ VU B1ab(i,ii,iii)+2ab(i,ii,iii,iv): Խոցելի տեսակ: Աճում է ինտենսիվորացվող տարածքներում: Տարածման և բնակության շրջաններինակերեսը 500 քառ. Կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի շատ մեծ ընդհանուր տարածումը սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ, սակայն վերջին տարիներին հայտնաբերվել են նոր պոպուլյացիաներ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ, հայցվող տարածքին ամենամոտ գտնվող աճելավայրը գտնվում է 1.5 կմ հեռավորության վրա՝ Միս գյուղում:

– նետախոտ նետախոտանման (*Sagittaria sagittifolia*)-կատեգորիան՝ CR B 1ab(ii,iii, iv)+2 ab(I,ii,iii,iv): Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Համարյա անհետացած է Լոռու սարահարթի լճերի բուսածածկման հետևանքով: Վերջին հավաքը իրականացվել 1960թ-ին: Տեսակը չի կարող պատկանել EX կատեգորիային, քանի որ հատուկ որոնումներ վերջին տարիներին չեն իրականացվել: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով անհետացած տեսակ: Ընդգրկված չէ

CITES—ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում, հայցվող տարածքին ամենամոտ գտնվող աճելավայրը գտնվում է 3 կմ հեռավորության վրա՝ Մայաթ-Նովա գյուղում:

– ջրահարս փոքր (*Najas minor*) – VU* B 1 ab(iii) + 2 ab(iii): Խոցելի տեսակ: Ըստ Ա. Մ. Բարսեղյանի (1981) տվյալների աճում է Արարատյան դաշտավայրում, 1983թ. Հայտնաբերվել է նաև Ապարանի ֆլորիստիկական շրջանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը 500 քառ. Կմ-ից պակաս: Հայաստանում տեսակին սպառնում է տարածման նվազում կապված հազվագյուտության, էկոսիստեմների փոփոխության գյուղատնտեսության զարգացման պատճառ: Տեսակի համաշխարհային մասշտաբով շատ լայն տարածման պատճառով կատեգորիան իջեցված է մեկ աստիճանով: Ընդգրկված էր Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ 1՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա կարգավիճակով: CITES—ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է, հայցվող տարածքին ամենամոտ գտնվող աճելավայրը գտնվում է 5.2 կմ հեռավորության վրա՝ Մասիս քաղաքի շրջակայքում:

Արարատի մարզի տարածքում տարածված են ցածր բարձրության (մինչև 1000 մ ծովի մակերևույթից բարձր) հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատտ սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Սակայն այստեղ հանդիպում են նաև արտազոնալ բնակավայրերին (քարաթափեր, ցանքեր, այգիներ, բնակավայրեր) բնորոշ տեսակներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրճողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ: Մարզի տարածքի դոմինանտ և բնորոշ տեսակներից կարելի է նշել Հայաստանում ամենուրեք տարածված *Crocidura* (սպիտակատամիկ),

Vulpes vulpes L. (աղվես), *Cricetus auratus* Nat. (գերմանամուկ), *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), *Perdix perdix* L. (կաքավ), *Grus grus* L. (կռունկ) և այլն:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, շրջանում հայտնի են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև.

– ակրամովսկու շադինա (*Shadinia akramovskii* (Shadin, 1952)) - սահմանափակ արեալով և կտրատված ապրելավայրերով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a, հայցվող տարածքին ամենամոտ գտնվող ապրելավայրը գտնվում է 7.4 կմ հեռավորության վրա՝ Մասիս քաղաքի շրջակայքում:

– մեծաչք ճպուռ (*Lestes macrostigma* (Eversmann, 1836)) - սահմանափակ կտրատված արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1b+B 2b, հայցվող տարածքին ամենամոտ գտնվող ապրելավայրը գտնվում է 0.8 կմ հեռավորության վրա՝ Միս գյուղի մոտակայքում:

– Վան Բրինկի նետիկ (*Coenagrion vanbrinkae* Lohmann, 1993) – հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a+B2a: Տեսակը ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3.1.) «Անբավարար տվյալներ» DD կարգավիճակով, հայցվող տարածքին ամենամոտ գտնվող ապրելավայրը գտնվում է 4.2 կմ հեռավորության վրա՝ Մասիս քաղաքի շրջակայքում:

– Դալի ավազամուկ (*Meriones dahli* Shidlovski, 1962) – Արարատյան հարթավայրի էնդեմիկ տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3.1.) «Endangered B1ab(iii)»: կարգավիճակով, Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տարածաշրջանում անհետացած»՝ RE, հայցվող տարածքին ամենամոտ գտնվող ապրելավայրը գտնվում է 0.5 կմ հեռավորության վրա՝ Ռանչպար գյուղի շրջակայքում:

– Փոքր ճագարամուկ (*Allactaga elater* Lichtenstein, 1825) - Արարատյան հարթավայրի նեղ արեալային էնդեմիկ տեսակ է, խիստ մասնատված արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3.1.) «Least Concern»: կարգավիճակով, Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1ab (ii,iii,iv), հայցվող տարածքին ամենամոտ գտնվող ապրելավայրը գտնվում է 1.7 կմ հեռավորության վրա:


– «Մարգագետնային ծիծառակացար» (*Glareola pratincola* (Linnaeus, 1766)): Հայաստանում հազվագյուտ տեսակ է, բնադրման տեղային բնույթով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3.1.) «Least Concern»: կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1,

– «Ռուբենյան բնդեռիկ» (*Adoretus rubenyani* Kalashian, 2002) – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+B2a:

Տեղամասի տարածքում դաշտային դիտարկումների ժամանակ կատարվել է ՀՀ կենդանիների և բույսեր կարմիր գրքերում գրանցված տեսակների համադրում, որի արդյունքում կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

3.8. Վտանգված էկոհամակարգերը

Արգելավայրերը մշտապես կամ ժամանակավորապես առանձնացված տարածքներ են, որտեղ ապահովվում են էտալոնային, գիտական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող բնական համալիրների և նրանց տարրերի տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը:



Նկ. 3.15. ՀՀ հատուկ պահպանվող տարածքները.

1. «Խոսրովի անտառ» պետական արգելոց,
12. «Գոռավանի ավազուտներ» արգելավայր,
16. «Խոր Վիրապ» արգելավայր,



Միսի ավազի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամաս:

Արարատի մարզում են գտնվում «Գոռավանի ավազուտներ» (մոտ 33 կմ) և «Խոր Վիրապ» (մոտ 23 կմ) արգելավայրերը ու «Խոսրովի անտառ» պետական արգելոցը (մոտ 45 կմ):

«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայր. բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների բացարձակ թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում /10 տեսակ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում/: Ընդհանուր առմամբ արգելավայրի տարածքում աճում են 160 տեսակի անոթավոր բույս: Էնդեմիկ ներկայացուցիչներից են *Salsola tamamschjanae*, *Acantholimon araxanum*: Այստեղ աճում են նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և արժեքավոր մի շարք այլ տեսակներ: Ողնաշարավորների ֆաունան հաշվվում է մոտ 20 տեսակ: Տարածքից հայտնի են Հայաստանի համար էնդեմիկ հանդիսացող 12 տեսակ բզեզ:

«Խոր վիրապ» պետական արգելավայրը. հիմնվել է 2007 թվականի հունվարի 25-ի N975-Ն որոշմամբ Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50,28 հեկտար տարածքում խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումն ապահովելու նպատակով: Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են: Արգելավայրի հիմնական խնդիրներն են՝

1) «Խոր Վիրապ» արգելավայրի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովումն ու պահպանությունը.

2) խոնավ տարածքի էկոհամակարգի էկոլոգիական հավասարակշռության, այդ թվում՝ ջրային ռեժիմի պահպանությունը.

3) վայրի բուսատեսակների և կենդանիների բնական միջավայրի պահպանությունը.

4) վտանգված, կրիտիկական վիճակում գտնվող, խոցելի, անհետացման եզրին գտնվող, ինչպես նաև Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունն ու վերարտադրությունը.

5) գիտաճանաչողական և էկոլոգիական զբոսաշրջության իրականացման նախադրյալների ստեղծումը:

Խոսքովի անտառ պետական արգելոց. հիմնադրվել է 1958 թվականին: Արգելոցը գտնվում է Արարատի մարզում Արարատյան դաշտի հարևանությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի լեռնաբազուկների, Երանոսի և Երախի լեռների վրա, հանքավայրի 43 տարածքից ավելի քան 20 կմ հեռավորության վրա: Այն զբաղեցնում է 23213.5 հա տարածք, տեղակայված է ծովի մակարդակից 700-ից մինչև 2800 մ բարձրության վրա: Արգելոցի բուսական աշխարհը ներառում է անոթավոր բույսերի 1849 տեսակ: Ավելի քան 80 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, իսկ 24 տեսակը էնդեմիկ են: Արգելոցի տարածքի 16%-ը անտառածածկ է: Բացատները, թփուտները և մացառուտները զբաղեցնում են տարածքի մեծ 20%-ը: Տարածքի մնացած 64%-ը զբաղեցնում են լեռնային քսերոֆիտների տարբեր տիպի համակեցություններ: Կենդանական աշխարհը ներառում է կաթնասունների՝ 44, թռչունների՝ 192, սողունների՝ 33, երկկենցաղների՝ 5 և ձկների՝ 9 տեսակներ: Արգելոցի ժայռային, քարքարոտ, խիստ թեքություն ունեցող սարալանջերը ապրելավայր են հանդիսանում գորշ արջի (*Ursus arctos syriacus*), բեզուարյան այծի (*Capra aegagrus*), կովկասյան ընձառյուծի (*Panthera pardus ciscaucasica*) համար, որոնք գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Արգելոցի առանձնահատկություններից է նաև պատմական և մշակութային հարուստ ժառանգությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից: Տարածքը սերտորեն կապված է հայ ժողովրդի պատմության և պատմական անցյալի փառահեղ դրվագների հետ՝ սկսած բազմաստված հեթանոսական և հելլենիստական մշակույթի շրջաններից: Արգելոցում մինչ օրս պահպանվում են բազմադարյան պատմություն ունեցող մշակութային կոթողներ, պատմաճարտարապետական հուշարձաններ, բույսերի և կենդանիների եզակի տեսականեր, լանդշաֆտների հիասքանչ բազմազանություն:

Համաձայն 2006թ.-ի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի 18 «Պետական արգելավայրերի պահպանության ռեժիմը» և 19 «Բնության հուշարձանների պահպանության ռեժիմը» հոդվածների, համապատասխանաբար, պետական արգելավայրի տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է հատուկ պահպանության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը և բնության հուշարձանի զբաղեցրած տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը սպառնում է դրա պահպանությանը:

3.9. Բնության հատուկ պահպանվող տարածքները

Հայցվող տեղամասի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Արարատի մարզում հաստատված բնության հուշարձանները նախագծվող տարածքից գտնվում են 30 կմ և ավելի հեռավորության վրա:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը, համաձայն որի Արարատի մարզում են գտնվում բնության հետևյալ հուշարձանները.

Աղյուսակ 3.9

Արարատ մարզի բնության հուշարձանների ցանկ


Երկրաբանական հուշարձաններ		
1.	«Անձավիկ» քարանձավ	Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 8 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա
3.	«Խոր հոր» անձավային համակարգ	Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին

8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ջանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Ջերմանիսի» բրածո ֆլորա	Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Ջերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
Կենսաբանական հուշարձաններ		
1.	«Աղակալած ճահճուտ»	Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Ենթակառուցվածքներ

Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսվող տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրում:



Նկ. 4.1 Արարատի մարզի ակնարկային քարտեզ

Արարատի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավ-արևմուտքում: Մարզը հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին և Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերին, հարավից՝ Աղբյուրանին, իսկ հարավարևմուտքից, պետական սահմանով՝ Թուրքիային:

Աղյուսակ 4.1

Արարատի մարզի սոցիալ-տնտեսական հակիրճ բնութագիրը

Տարածքը	2090 կմ ²
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	7.0
Համայնքներ, 2023 թ. տարեկգրի դրությամբ	5
Քաղաքներ	4
Գյուղեր	95
Բնակչության թվաքանակը 2023 թ. տարեկգրի դրությամբ այդ թվում՝	259.3 հազ. մարդ
քաղաքային	72.3 հազ. մարդ
գյուղական	187.0 հազ.մարդ
Գյուղատնտեսական նշանակության հողեր այդ թվում՝ վարելահողեր	156020.4 հա 24130.8 հա

Արարատի մարզը հանրապետության տնտեսապես զարգացած մարզերից է: 2022թ. մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 11.2 %,
- գյուղատնտեսություն 14.7 %,
- շինարարություն 5.8 %,
- մանրածախ առևտուր 3.8 %,
- ծառայություններ 1.6 %:

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ: Մարզի տնտեսության զարգացման համար իրենց դերն ունեն նաև զբոսաշրջային ռեսուրսները: Տարեկան հազարավոր զբոսաշրջիկներ այցելում են Խոր Վիրապի վանքային համալիր, Պարույր Սևակի տուն-թանգարան և այլ վայրեր: Էկոզբոսաշրջության զարգացման համար բավարար նախադրյալներ կան Խոսրովի արգելոցում և Դաշտաքարում: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Արարատի մարզի տարածքով է անցնում հանրապետական նշանակության Երևան-Երասխ երկաթուղին: Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Արտաշատ քաղաքը (2023թ. տարեսկզբին՝ 19.1 հազ. բնակիչ) մարզկենտրոնն է: Քաղաքը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա, զբաղեցնում է 800 հա տարածություն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում են սննդամթերքի և խմիչքների արտադրությունը (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների), ինչպես նաև ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրությունը (կղմինդրի, աղյուսի և թրծված կավից շինարարական արտադրատեսակ-

ների, բնական քարերից երեսպատման նյութերի արտադրությունը): Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է:

Արարատ քաղաքը (2023թ. տարեսկզբին՝ 20.5 հազ. մարդ) գտնվում է Երևանից 47 կմ հեռավորության վրա, հիմնադրվել է 1936թ.-ին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ իր գերակշիռ տեղն ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ցեմենտի, կրի և ասբոցեմենտային իրերի արտադրությունը):

Վեդի քաղաքը (2023թ. տարեսկզբին՝ 11.8 հազ. մարդ) գտնվում է Վեդի գետի աջ ափին, Երևանից 48 կմ հեռավորության վրա: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որում կարևոր տեղ է զբաղեցնում բնական քարերից երեսպատման նյութերի, էլեկտրական և հսկիչ սարքերի ու սարքավորումների, պլաստմասաներից պատրաստվող շինարարական իրերի արտադրությունը: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունը դաշտավարությունն է: Վեդին հարուստ է ստորգետնյա հանքային ջրերի պաշարներով: Վեդին տարածքի մեծությամբ մարզի ամենափոքր քաղաքն է: Այն առավել հայտնի է իր զինով և այլ խմիչքներով:

Մասիս քաղաքը (2023թ. տարեսկզբին՝ 20.9 հազ. մարդ) գտնվում է Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հեռավորության վրա: Խոշոր երկաթուղային ապրանքային կայան է, որն ունի միջմարզային նշանակություն և սպասարկում է Երևան քաղաքին: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում սննդամթերքի արտադրությունը, թղթի և թղթային արտադրատեսակների արտադրությունը և ծխախոտի ապրանքների արտադրությունը:

4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիրը

Միս գյուղ, մակերես՝ 14.9 կմ², բնակչություն՝ 1425 մարդ (2023թ. հունվարի 1-ի դրությամբ):

Գյուղ Մասիսի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 26 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Սարվան, Սարվանլար, Սարվանլար Վերին անվա-

նումները: Վերանվանվել է Սիս 1989 թ-ին: Գյուղն ընկած է Հրազդան գետի աջ ափին՝ Միջինարաքայան գոգավորությունում: Տեղադրված է ծովի մակարդակից 828 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը տատանվում է -30-ից -50: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Բնական լանդշաֆտները կլիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: 1831 թ-ին գյուղն ունեցել է 153, 1897 թ-ին՝ 953, 1931 թ-ին՝ 404, 1939 թ-ին՝ 580, 1959 թ-ին՝ 816, 1979 թ-ին՝ 1552 բնակիչ: 1988-89 թթ հայ-ադրբեջանական հարաբերությունների վարթարացման արդյունքում ազգային կազմը դարձել է միատարր և Ադրբեջանից գաղթել են 2890 հայեր: Ըստ 2005 թ-ի ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքի բնակչությունը կազմում է 1982 մարդ, որից 48% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 52%: Մինչ աշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 29%, աշխատունակ տարիքի ներկայացուցիչները՝ 57%, հետաշխատունակները՝ 14%:

Գյուղն ունի 535 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսակն նշանակության հողերը կազմում են շուրջ 370 հա: Համայնքի հողերն օգտագործվում են որպես վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ: Զբաղվում են դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Համեմատաբար ընդարձակ մակերես են զբաղեցնում արոտավայրերը՝ շուրջ 129 հա: Կան խոտհարքեր՝ 74 հա: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, ձկնաբուծությամբ: Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

4.3. Պատմության և մշակութային հուշարձանները

ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Միսի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասի հարակից շրջանում՝ Ռանչպար և Միս գյուղերում ու դրանց մոտակայքում, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հաշվառվել: Հետևաբար, երկրաբանահետախուզական աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանի իրավիճակի վրա:

4.4. Տեղեկատվություն հանրության ծանուցուման, հանրային լսումների և արդյունքների մասին

Միսի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՀԱՏԻԿ» տեղամասում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող աշխատանքների բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ:

Հանդիպումը կայացել է 2024 թ. հուլիսի 18-ին՝ ժամը 11:30-ին ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրի տարածքում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 7 օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը եղել է հասանելի հանրության համար:

Հանդիպման արձանագրությունը, մասնակիցների ցանկը և ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու որոշումը բերված են հավելված 1-ում:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա ակնկալվող բնապահպանական ազդեցությունները լինելու են աննշան, որոնց նախնական նկարագիրը ներկայացված է ստորև:

5.1. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում կիրառվող ավտոտրանսպորտը դառնալու է գազերի և փոշու արտանետման աղբյուր: Կապիլյար ներծծման հաշվին ավազակոպճային կուտակը գտնվում է խոնավ վիճակում, ինչի հետևանքով տեղամասի տարածքում հետախուզական փորվածքների անցման, նմուշառման և փորձնական հանույթի ժամանակ փոշեգոյացում չի կատարվելու: Փոշեգոյացում կլինի միայն տեղամասի տարածքին մոտեցնող ճանապարհների վրա:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատասխանաբար կազմում է 5 մգ/մ³, 0.2 մգ/մ³, 0.15 մգ/մ³ և 0.5 մգ/մ³:

Նախնական գնահատականներով, տեղամասի սահմաններում աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի անիվների ու ճանապարհի շփման հետևանքով առաջանալու է 0.0078 գ/վրկ փոշի, ինչը չի գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Հետախուզահորերի փորման ժամանակ էքսկավատորի աշխատանքից առաջացող ածխածնի օքսիդի արտանետումները կկազմեն 0.000020 մգ/մ³, ազոտի երկօքսիդի արտանետումները՝ 0.000049 մգ/մ³:

Հայցվող տեղամասի տարածքին մոտեցնող ճանապարհներին աշխատանքները սպասարկող մեքենաների տեղաշարժի հետևանքով գոյացող արտանետումները չեն գերազանցելու սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ):

5.2. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Նախնական գնահատմամբ ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Տեղամասի եզրագիծը անցնում է Մեծամոր գետի ափից 23 մ հեռավորության վրա:

5.3. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում ուսումնասիրվող տեղամասի տարածքում հողաբուսական շերտը չի խախտվելու, քանի որ հորատահարթակների կառուցում և դրանց մոտեցող ճանապարհների կառուցապատում չի նախատեսվում: Ռեկուլտիվացիոն աշխատանքներ ընկերությունը իրականացնելու է միային 2 հետախուզահորից հանված լեռնային զանգվածի ծավալների հետ լցման աշխատանքներով, որը կկատարվի մեխանիկական եղանակով: Ընդանուր ծավալը կազմում է 24 մ³ (8.0 մ × 2.0 մ × 1.5 մ), իսկ շրջակա միջավայրի պահպանության դրամազլիսին ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 96000 ՀՀ դրամ:

Տեղամասի տարածքում նավթամթերքները նախատեսվում է պահել հատուկ մեկուսացված հարթակների վրա՝ անթափանց տառանքերով կամ կոնտեյներներով, ինչը բացառում է տեղամասի մակերևույթի աղտոտումը նավթամթերքներով:

5.4. Ազդեցությունը կենսաբազմազանության վրա

Միսի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՀՄՏԻԿ» տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման ժամանակ տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա կանխատեսվում է աննշան ազդեցություն, քանի որ ընդհանուր առմամբ տարածաշրջանը հանդիսանում է տնտեսապես յուրացված գոտի:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների աճելավայրեր չեն հայտնաբերվել: Այնուամենայնիվ, գործունեության ընթացքում հանդիպելու դեպքում կձեռնարկվեն պահպանության միջոցառումներ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշման դրույթներով, համաձայն որի իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին,

2. բուսատեսակների այլ աճելավայրեր ապօրինի տեղափոխման և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցման կանխարգելում,

3. կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների ապօրինի օգտագործման և օտարածին տեսակների ներմուծման կանխարգելում,

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների ապրելավայրեր չեն հայտնաբերվել: Հայտնաբերելու դեպքում կենդանական աշխարհի պահպանությանն նպատակով կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ ապահովել.

ա) գենֆոնդի և տեսակային բազմազանության պահպանությունը, պաշտպանությունը, բնականոն վերարտադրությունը,

բ) կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը,

գ) կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը,

դ) կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը:

5.5. Ընդերքօգտագործման թափոններ

Երկրաբանական ուսումնասիրության ժամանակ առաջանալու է.

1) չտեսակավորված կենցաղային աղբ (օրական առավելագույնը 10 կգ), որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004, կազմը՝ ապակի 9-14 %, սև մետաղ 20-25%, փայտ 8-13%, թուղթ 25-30%, կտոր 3-7%, սննդի մնացորդ 11-15%, պոլիմերներ 7-12%,

2) չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի), որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 35131100 01 00 4, օրական ծավալը 2-2.5 կգ:

5.6. Աղմուկ և թրթռում

Ծրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը կարող է լինել առաջացող աղմուկը: Նախնական հաշվարկներով աշխատանքների ժամանակ առաջանալու է 40 դԲԱ աղմուկ, ինչը ցածր է բնակելի գոտում աղմուկի թույլատրելի մակարդակից (45 դԲԱ):

Միս բնակավայրի ամենամոտ շինությունը գտնվում է հայցվող տարածքից 1 կմ հեռավորության վրա: Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրը հետախուզահորերի անցումն ապահովող էքսկավատորի և հորատող սարքի աշխատանքներն են, ինչից առաջացող գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ $LA_{էկվ}$ կազմում է 55 դԲԱ: Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝ $LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$ բանաձևով, որտեղ՝ $LA_{էկվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $LA_{էկվ}=55$ դԲԱ, $\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ} = 5$ դԲԱ, $\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (տեղամասի ռելիեֆ), $\Delta LA_{էկր} = 5$ դԲԱ, $\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ}=5$ դԲԱ:

Աղմուկի մակարդակը Միս գյուղի մոտ կկազմի՝

$$LA_{տար} = 5 - 10 - 5 - 5 = 40 \text{ դԲԱ (նորման 45 դԲԱ):}$$

Հետևաբար, երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում ազդեցություն բնակիչների վրա չեն ունենալու:

Երկրաբանահետախուզական աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115 դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112 դԲԱ:

5.7. Սանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի «ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» N06-Ն հրամանով, ավագի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական պաշտպանական գոտիներ նախատեսված չեն:

5.8. Պատմամշակութային հուշարձանների պահպանություն

Հայցվող տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում որևէ ազդեցություն պատմամշակութային արժեքների վրա չի կանխատեսվում: Աշխատանքների ընթացքում նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի 438 որոշման 43-րդ կետի որոշման պահանջներով՝ մասնավորապես «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:

5.9. Սոցիալ-տնտեսական ազդեցություն

Երկրաբանահետախուզական աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փաստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը: Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և գուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում՝ հասանելի վայրում, պետք է լինեն առաջին օգնության բժշկական միջոցներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով, անհատական պաշտպանության միջոցներով և անվտանգության համար անհրաժեշտ այլ միջոցներով: Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի:

Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն տրվելու է տեղի բնակչությանը: Ինչպես երկրաբանահետախուզական աշխատանքների, այնպես էլ հետագա շահագործման աշխատանքների ընթացքում նախատեսվում է աշխատակիցներ ներգրավել համայնքի բնակիչներից, ինչպես նաև աջակցել ազդակիր համայնքին և հատկացնել նախատեսված սոցիալական վճարները:

**6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ
ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

6.1. Բնապահպանական միջոցառումների բնութագրերը

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

– նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկով ապահովված պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,

– մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում՝ մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար,

– կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարրաների մեջ և հետագա տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր, աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր և կատարել համապատասխան վճարումները:

– արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

– աշխատող մեքենայի շարժիչի կարգավորում՝ աղմուկի մակարդակի կարգավորման և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով:

– տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին, հորատման հաստոցի հենք հանդիսացող մեքենայի տեղաշարժի ժամանակ, հորատման հարթակների տարածքի խոնավեցում՝ փոշեզոյացումը բացառելու նպատակով:

– խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում ուսումնասիրվող տեղամասի տարածքում հորատահարթակների կառուցում և դրանց մոտեցող ճանապարհների կառուցապատում չի նախատեսվում, ուստի չի խախտվելու հողաբուսական շերտը: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում ընկերության կողմից կատարվելու է միային 2 հետախուզահորերից հանված լեռնային զանգվածի ծավալների հետ լցման աշխատանքներով 19.5 մ^3 ($6.5 \text{ մ} \times 2.0 \text{ մ} \times 1.5 \text{ մ}$), իսկ, որը կկատարվի մեխանիկական եղանակով: Այստեղից հանված հողաբուսական շերտը՝ համաձայն ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն և 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշումների պահանջներին համապատասխան, առանձնացված կուտակվելու է հորատահարթակում հատուկ հատկացված վայրում, որը օգտագործվելու է ռեկուլտիվացման նպատակով: Հողաբուսական շերտի ընդհանուր ծավալը կազմում է 4.5 մ^3 ($1.5 \text{ մ} \times 2.0 \text{ մ} \times 1.5 \text{ մ}$): Ռեկուլտիվացման աշխատանքները կկատարվեն մեխանիկական եղանակով:

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 96000 ՀՀ դրամ:

Բուսական աշխարհի պահպանությունը իրականացնել համաձայն կառավարության 2014 թ.-ի թիվ 781-Ն որոշման դրույթների՝ բուսական աշխարհի օբյեկտների դրանց աճելավայրերի պահպանությամբ ապահովել վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը:

Կենդանական աշխարհի պահպանությանն նպատակով ապահովել.

ա) գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանությունը, պաշտպանությունը, բնականոն վերարտադրությունը,

բ) կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը,

գ) կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը,

դ) կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը:

ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի թիվ 64-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով նախատեսված է, որ ջրային աղբոտման, աղտոտման, տղմակալման և հյուծման կանխարգելման նպատակով պետք է սահմանվի ջրապահպան գոտիներ: Այս

պահանջը հայցվող տարածքում բավարարված է, տեղամասը գտնվում է Մեծամոր գետից նվազագույնը 23 մ հեռավորության վրա:

Աղմուկի նվազեցման նպատակով նախատեսվում է մեքենաները սարքավորվել ձայնախլացուցիչներով:

Նախատեսվում են աշխատողների սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

Նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում կանխատեսվող հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները առավել մանրամասն ներկայացված են բնապահպանական կառավարման պլանում (հավելված 2): Այն ներառում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

6.2. Արտակարգ իրավիճակների կառավարում

Հայցվող տեղամասի տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը ներկայացվում է ստորև:

I. Արտածին երկրաբանական երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ.

– Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) տեղամասի շրջանում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Հետևաբար, սողանքային երևույթների հետ կապված արտակարգ դրություններ չեն լինելու:

II. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ.

– Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300 սմ/վրկ²

գրունտի հորիզոնական արագացման մեծություն: Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նապատակով նախատեսվում է տեղամասում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- ✓ անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- ✓ հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- ✓ դուրս գալ վագոն-տնակից,
- ✓ կանգնել բացօթյա տարածքում,
- ✓ կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- ✓ կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- ✓ հանքի սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարահանումը,
- ✓ տեղամասում տեղադրված վագոն-տնակում ապահովել առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքի առկայությունը:

III. Գարնանային վարարման հետ կապված արտակարգ իրավիճակներ

Տեղամասի տարածքում արտակարգ իրավիճակները կարող են կապված լինեն Արաքս գետի վարարման հետ:

Համաձայն գետի բազմամյա դիտարկման տվյալների՝ վարարման շրջանը տևում է մոտ 2,5 ամիս՝ ապրիլից-հունիս:

Վարարման շրջանում, ըստ անհրաժեշտության, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ չեն կատարվելու, տեխնիկական միջոցները հեռացվելու են տեղամասից, ինչը թույլ է տալիս բացառել վարարման հետ կապված բոլոր խնդիրներից:

IV. Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

V. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ): Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ի հայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,

– կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը, նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները, բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով, աշխատակիցները պատսպարվում են տեղամասի տարածքում տեղադրված վագոն-տնակում:

Հայցվող տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

– աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,

– օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,

– անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,

– աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

6.3. Բնապահպանական մշտադիտարկումների պլան

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 6.1-ում: Մշտադիտարկումների տեսակների, տեղադիրքերի և պարբերականության վերաբերյալ տվյալները ներկայացված են նաև աղյուսակ 6.1-ում: Տեղամասի տարածքում կատարվելիք


շրջակա միջավայրի մոնիթորինգի իրականացման համար գումարները (տարեկան 240.0 հազ. դրամ) ներառված են ընկերության շահագործական ծախսերի կազմում:

Աղյուսակ 6.1

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկման տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4	5
Մթնոլորտային օդ	հայցվող տարածք, ըստ աշխատանքների իրականացման վայրի	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	հայցվող տարածք, ըստ աշխատանքների իրականացման վայրի	հողերի քիմիական կազմը, հողերի կազմաբանությունը, հումուսի պարունակությունը, հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	հայցվող տարածքին հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ
Աղմուկ և թրթռում	հայցվող տարածք	աղմուկի մակարդակը և թրթռումների ազդեցությունը	չափումներ շարժական աղմկաչափով	ամսական մեկ անգամ

Հայցվող տարածքում մթնոլորտային և ստորգետնյա ջրերի դիտակետեր չեն նախատեսվում, քանի որ ինչպես արդեն նշվել է հորատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել առանց ջրի օգտագործման՝ չոր եղանակով, ինչը չի բերի կեղտաջրերի առաջացման: Ուսումնասիրության ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում ստորգետնյա ջրերի առկայությունն նույնպես չի սպասվում:



- 1 Մթնոլորտի աղտոտվածության մշտադիտարկման կետ հետախուզվող տեղամասում
- 2 Մթնոլորտի աղտոտվածության մշտադիտարկման կետ ավտոճանապարհին
- 3 Հողի աղտոտվածության մշտադիտարկման կետ հետախուզվող տեղամասում
- 4 Աղմուկի մակարդակի մշտադիտարկման կետ հետախուզվող տեղամասում
- 5 Կենսաբազմազանության մշտադիտարկման կետ հետախուզվող տեղամասի հարակից տարածքներում

Նկ. 6.1. Մշտադիտարկման կետերի տեղադիրքի քարտեզ-սխեմա

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»,
2. «ՀՀՇՆ 20.04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»
3. Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքէջ, www.armmonitoring.am
4. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ
6. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ, <https://armstat.am/am/?nid=532>
7. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: §Айастан§, 1976 г.
8. §Растительность Армянской ССР§. Магакьян А.К.
9. §Флора, растительность и растительные ресурсы Армении§, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван.
10. §Дикорастущие съедобные растения Армении§. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
12. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասիս համայնքի Միս բնակավայրում ավազակույճային խառնուրդի հանքավայրի «Մաքուր Հատիկ» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման վերաբերյալ հանրային լսման

18-ը հուլիսի 2024թ. գյուղ Միս

2024 թվականի հուլիսի 18-ին, ժամը 11-30-ին տեղի ունեցավ «ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրի տարածքում Միսի ավազակույճային խառնուրդի հանքավայրի «ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի 1-ին հանրային լսումը:

Մասնակցեցին՝ Մասիս համայնքի ղեկավարի օգնական Կ.Թադևոսյանը, Միս համայնքի վարչական ղեկավար Հ.Ալեքսանյանը, «Մաքուր Հատիկ» ընկերության ներկայացուցիչ Ա.Մկրտչյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա.Բաղդասարյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Ռ.Քոչարյանը և համայնքի քնակիչները:

Բացման խոսքով հանդես եկավ Մասիս համայնքի ղեկավարի օգնական Կ.Թադևոսյանը: Վերջինս ողջունելով ներկաներին հայտնեց, որ «Մաքուր հատիկ» ՍՊԸ-ի տնօրեն Գևորգյանի գրության հիման վրա՝ հասցեագրված Մասիս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանին, իրականացվում է հանրային լսում կապված այն բանի հետ, որ նշված ընկերությունը ցանկանում է Միս բնակավայրի տարածքում Միսի ավազակույճային խառնուրդի հանքավայրի «Մաքուր հատիկ» տեղամասում իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Գեոէկոնոմիկա ՓԲԸ-ի՝ նախագծող կազմակերպության գլխավոր տնօրեն Ա.Բաղդասարյանը ներկայացրեց, որ նախագծի շրջանակներում սա առաջին հանդիպումն է, որի նպատակն է ներկայացնել Միսի ավազակույճային խառնուրդի հանքավայրի «Մաքուր հատիկ» տեղամասում «Մաքուր հատիկ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնվող երկրաբանական ուսումնասիրությունների Ծրագիրը: Նախագծի հաջող ընթացքի և համայնքի ավագանու համաձայնության դեպքում, լինելու է ևս մեկ հանդիպում:

Տեղամասի տարածքն ունի մոտ 48 հա մակերես, գյուղատնտեսական նպատակով չի օգտագործվում, անտառածածկույթից զուրկ է:

Երկրաբանական ուսումնասիրությունների Ծրագրով դաշտային պայմաններում նախատեսվում է իրականացնել.

- երկրաբ. հանույթ 1 : 2000 մասշտաբի,
 - հորատանցքերի մեխ. սյունակային հորատում՝ 180 զմ
 - հորատահանուկային և ակոսային նմուշարկում՝ 32 և 2 քանակներով,
 - հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ,
 - բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածի և հումքի փխրեցման գործակցի որոշում՝ 2 նմուշով,
 - ուսդիոմետրիական ուսումնասիրություններ,
 - տեղագրամարկչեղերական աշխատանքներ՝ 48 հա,
 - հետախուզահորերի հետ լցում, հարթեցում (ռեկուլտիվացիա):
 - հողի, ջրի և օդի աղտոտվածության ելակետային իրավիճակի փաստագրում՝ 2-ական նմուշ:
- Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման կամ վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.
- մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում՝ մասնագիտացված ընկերությունների տարածքում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուրերի, քսայտերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար,
- կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարրաների մեջ և հետագա տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր, աղբահանության նպատակով համապատասխան ծառայությունների հետ նախատեսվում է կնքել պայմանագիր և կատարել համապատասխան վճարումները:
- կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար նախատեսվում է դատարկել հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով,
- աշխատող մեքենայի շարժիչի կարգավորում՝ աղմուկի մակարդակի կարգավորման և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության նվազեցման նպատակով:
- տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղա-նակներին, հորատման հաստոցի հենք հանդիսացող մեքենայի տեղաշարժի ժամանակ, հորատման հարթակների տարածքի խոնավեցում՝ փոշեգոյացումը բացառելու նպատակով:
- խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո:
- Ռեկուլտիվացիոն աշխատանքներն ընկերության կողմից կատարվելու են միային 2 հետախուզահորերից հանված ծավալների հետ լցմամբ, որը կկատարվի մեխանիկական եղանակով: Ընդանուր ծավալը կազմում է 21 մ3 (7.0մ x 2.0մ x 1.5մ), իսկ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 84000 ՀՀ դրամ:

Այնուհետև հարցերով հանդես եկավ համայնքի ղեկավարի օգնական Կ.Թադևոսյանը, տրվեցին հարցեր իրականացվելիք գործունեության հողատարածքի պատկանելիության, հարակից հողատարածքներում այլ տնտեսությունների առկայության, բնակելի տներից հեռավորության, ինչպես նաև օգտագործվելիք տեխնիկայի վերաբերյալ, որոնց ընկերության ներկայացուցիչների կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

Հանրային լսման ավարտին Կ.Թադևոսյանը հայտնեց, որ լսման արդյունքներն օրենքով սահմանված ժամկետում կտրամադրվեն Մասիս համայնքի ավագանուն և ավագանու նիստին կորոշվի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տրամադրել կամ չտրամադրելը:

Հանրային լսման վարող և պատասխանատու, Մասիս համայնքի ղեկավարի օգնական՝



Կ. Թադևոսյան

«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝



Ա. Մկրտչյան

«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրի տարածքում՝ Միսի ավագակոպչային խառնուրդի հանրավայրի «ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն ստանալու համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի 1-ին հանրային լսման մասնակիցների

ՑՈՒՑԱԿ

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Միս բնակավայրի վարչական շենք

«18» հուլիսի 2024թ.

Անուն Ազգանուն	Կոնտակտային տվյալներ	Ստորագրություն
Գրսել Բալխայան	093-900-519	
Գրսել Գալստյան	093-70-91-92	
Պապուկյան Լևոնիկ	098 60 0095	
Պետրոս Պետրոսյան	094 22 96 92	
Պետրոսյան Գրսել	093 259 123	
Պետրոսյան Գրգոր	094-10-65-20	
Պետրոսյան Արթուր	098 84 99 37	
Բալխայան Կ. «ԳեոՏեխնո» ՍՊԸ ղեկ. ղե.		
Պետրոսյան Գրգոր	«Քեմիստ» 110 թի. 7. Գ.	
Կրկն «Արթուր» «Քեմիստ» ղեկ. ղե. 2024-ի	«Քեմիստ» ղեկ. ղե. 2024-ի	
Գրգորյան Գրգոր	Էտրիս	
Կարապետ Կարապետյան	091061626 փող. Պետրոսյան	

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N205-Ա ՈՐՈՇՈՒՄԸ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ.՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 օգոստոսի 2024 թվականի N 205-Ա

**«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԿԱՐ
ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկլարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

Տրամադրել նախնական համաձայնություն՝ «ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊ ընկերության կողմից նախատեսվող օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով Մասիս համայնքի Սիս բնակավայրի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

Կողմ -14

Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄՅԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԼՈՒԻՍԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈՔՅԱՆ ՆՈՐԱՅՐ *[Signature]*

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ *[Signature]*

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՀԱՅԿ *[Signature]*

ՄԵՍՐՈՊՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ *[Signature]*

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ *[Signature]*

ՎԱՆՅԱՆ ՆԱԻՐԱ *[Signature]*

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ *[Signature]*

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻՋԱՎԵՏԱ *[Signature]*

ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԼԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ



ԲՆԱՊԱՀԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Առաջարկվող մեղմացման միջոցառումներ	Մշտադիտարկման ցուցիչ	Ծախսերը, հազ. դրամ	Կատարող
1	2	3	4	5	6
<p>Հորատման աշխատանքներ, Փորձնական հանույթ</p>	<p>Օդի աղտոտում փոշով և արտանետումներով</p>	<ul style="list-style-type: none"> - փոշեգոյացման կանխում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության ժամանակ - աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - օգտագործվող տեխնիկան պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները 	<ul style="list-style-type: none"> - հորատման հարթակների, փորձնական բացահանքի տարածքի և ճանապարհների ջրցանում - աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման բացառում - հանքի տեխնիկան և մեքենաների շահագործում առանց հավելյալ արտանետումների - մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում 		<p>«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ</p>
	<p>Աղմուկ</p>	<ul style="list-style-type: none"> - սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - սարքավորումների շարժիչների ծածկերի փակում շահագործման ընթացքում 	<ul style="list-style-type: none"> - աշխատանքային ժամերից հետո աշխատող սարքավորումների բացառում - սարքավորումների բավարար տեխնիկական վիճակ - միացված չօգտագործվող սարքավորումների բացառում - մոտակայքի բնակիչներից բողոքների բացառում 	<p>240 հազ. դրամ</p>	<p>«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ</p>
	<p>Ազդեցություն բուսական և կենդանական աշխարհի վրա</p>	<ul style="list-style-type: none"> - Կենսաբազմազանության մշտադիտարկում, տարեկան մեկ անգամ պարբերականությամբ, - ՀՀ կառավարության 2014թ. հունիսի 31-ի N781Ն որոշման պահանջների ապահովում 	<ul style="list-style-type: none"> - բացառել տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս: - հնարավորինս արագ վերակազմել խախտված հողաբուսաշերտը: - կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում 		<p>«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ</p>

			առանձնացնել տվյալ պահպանվող գոտին: – կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:		
Հողային աշխատանքներ	Բուսականության կորուստ հողաբուսական շերտի խախտման արդյունքում	– հողի բուսական շերտի հեռացում և ժամանակավոր կուտակում տարածքի ռեկուլտիվացման համար – հանված հողի ժամանակավոր պահում նախապես սահմանված վայրերում՝ հորատման հարթակների հարևանությամբ	– խախտված հողերի ռեկուլտիվացիա հորատման աշխատանքների ավարտից հետո		«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻՎ» ՍՊԸ
Կենցաղային թափոնների գոյացում	Աշխատանքների կատարման վայրում սանիտարահիգիենիկ պայմանների վատացում	– ուսումնասիրության տարածքում զուգարանի տեղակայում և պահպանում սանիտարական նորմերին համապատասխան	– ուսումնասիրության տարածքում պատշաճ սանիտարական պայմաններում գտնվող զուգարանների առկայություն	ընթացիկ ծախսեր	«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻՎ» ՍՊԸ
Երթևեկության և հետիոտների անվտանգություն	Ուղղակի և անուղղակի վտանգներ երթևեկությանը և հետիոտներին հորատման աշխատանքների ժամանակ	– երթևեկության կառավարման համակարգ և անձնակազմի ուսուցում	– աշխատանքների հստակ տեսանելի տարածք, – կարգավորված երթևեկություն	ընթացիկ ծախսեր	«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻՎ» ՍՊԸ

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՀՈՂԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 20 փետրվարի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԱՔՈՒՐ ՀԱՏԻԿ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Սիս թիվ 4 հողամաս

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի ներդրման պայմանագիր 14.02.2024թ. հ. 796

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 03-083-0118-0001

Մակերեսի չափը (հա)՝ 36.62864

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 20022024-03-0043, գաղտնաբառ՝ 4PEGHPC96UBT

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ


Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է 04.10.2005 թ. N 199-Ն ՀՀ օրենքի 23-րդ /ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ/ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը ներկայացվելու դեպքում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՏԻՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի գլխավոր ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 20022024-03-0043, գաղտնաբառ՝ 4PEGHPC96UBT

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Կադաստրի կոմիտեի